№ 5 (232) XXIII ՏԱՐԻ ՄԱՅԻՍ 1913

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENEVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ԴԻԼԵՄՄԸ

Խաղաղութիւնը կնքուեց Թիւրքիոյ և Բալկանեան պետութիւնների միջև։ Վերջացա՞ւ օսմանեան տիրապետութիւնը Եւրոպայում, 500 տարուայ փոթորկալի ելևէջներից յետոյ։ Մի փոքրիկ հողաբաժին ձգուեց նրան յ'առաջամեայ մխիթարութիւն... „Յ'առաջամեայ"— որովհետև մնացածի գոյութիւնն ևս փխրուն է, անխարիսխ ու անյոյս...

Հինգ հարիւր տարի ապրեց այդ կենդանի և վիթխարի դիակը Եւրոպայի հորիզոններում, առանց երբէք կարողանալու յարմարիլ քաղաքակրթութեան տարրական պահանջներին։ Հինգ հարիւր տարի ամբողջ Մակեդոնիան, Թրակիան, ուրիշ քրիստոնեայ երկիրներ ծառայեցին խալիֆներին, իբրև սոսկ գաղթավայր, ուր Թիւրքը բնաւ երբէք չզգաց իրեն իր սեփական հայրենիքում, ուր նա երբէք չկարողացաւ սիրաշահել քրիստոնեայ հպատակներին, ձուլել նրանց իր հսկայ զանգուածի մէջ, այլ մնաց միշտ մի սոսկ գաղութ, մի *intrus*, բռնաւոր ու հարստահարիչ, ատուած և նզովուած։

Երբ պատերազմի բախտը սկսեց դաւաճանել նախկին գոռող աշխարհակալողին, երբ ընդարձակ երկիրները մին-միւսի ետևից խլուեցին „քրիստոնեաների կազատագրման" պատրուակի տակ, Օսմանի ժառանգները սկսեցին խելքի գալ, ըմբռնել, որ լոկ սրով ու բռնութեամբ անկարելի է պահպանել ահագին կայսրութիւնը, որ անհրաժեշտ է գոհացուցանել „ռայա"ին, անհրաժեշտ է եւրոպականանալ, բարենորոգուիլ։

Եւ հարիւր տարուց ի վեր Թիւրքիան բարենորոգուում էր... Հարիւր տարուց ի վեր նա պարբերաբար հրատարակում էր ի լուր քրիստոնեայ մարդկութեան՝ իր հանդիսաւոր ծրագիրները, „Հատտը"ները։

Ոչինչ հետևանք։ Որովհետև այդ մեծաշուքնդ հրովարտակների, ծրագիրների տակ գործում էր Թիւրքական Մակկեավէլների իսկական նպատակը—քրիստոնեաների աստիճանական բնաջնջման ծրագիրը։

Այո, զղջո՛ւմ էր խալիֆութիւնը, որ ժամանակին չէր գործադրել այդ „փրկարար" տակտիկը, զղջում էր, որ էն սկզբից—դարեր առաջ, երբ հաստատել էր իր ահարկու տիրապետութիւնը փոքր Ասիայում ու Եւրոպայում— չէր ձգտել սրի ուժով իսլամացնել այդ ահագին զանգուածները քրիստոնեայ ժողովուրդների, այլ մի տեսակ արհամարհոտ համբերողութեամբ թողել էր, որ նրանք պահեն իրենց ազգային յատկանիշները, լեզու, կրօն և այլն։

Արդարև, թուում է թէ էն սկզբում այդ տակտիկը կը պսակուէր յաջողութեամբ։ Այն հեռաւոր և խաւար ժամանակներում, երբ Օսմանի հորդաները ահարկու յորձանքի պէս հեղեղում էին Արևելքը, երբ էտապից-էտապ, յաղթանակից-յաղթանակ՝ նրանք դիմում էին դէպի Արևմտեան Եւրոպա, հասնում էին Վիեննայի դռները, երբ արևմտեան ամենահզօր վեհապետներն անգամ գողում էին այդ նոր ու անակնկալ կռվի առջև,—թուում է թէ խիստ դիւրին էր սուլթանների համար՝ միանգամ ընդմիշտ ջնջել „քրիստոնէութեան ուրուականը" իրենց տիրապետութեան սահմաններում, զանգուածային կոտորածների սպառնալիքով լուծել բոլոր քրիստոնեաներին—յոյն, բուլգար, սերբ, մարոնիա, հայ, վրացի և այլն— իսլամական կրօնքի ու կենդանի մէջ։ Զէ՞ որ արդէն—երբեմն նոյնիսկ յօժարակամ—ձուլուում էին շատ քրիստոնեայ համայնքներ, որոնք այսօր էլ շարունակում են դաւանել մահմեդական հաւատամքը։

Այդպիսով կըստեղծուէր թերևս—վաղուց արդէն—միապաղաղ, համատարր Ցաճկաստանը, չէր լինի ռայա-ի, քրիստոնեայի խնդիր, չէին լինի պարբերական ցնցումներ և արտաքին միջամտութիւններ։

Թիւրքիան, սակայն, հրաժարուեց սկզբներում այդ բռնի ու զանգուածային իսլամացման տակտիկից,—հրաժարուեց, դրդուած մասամբ տնտեսական մտահոգութիւններից, մասամբ էլ այն գոռող ու արհամարհոտ համբերողութիւնից (*tolérance*), որի մասին շեշտեցինք քիչ առաջ։

Եւ երբ զղջաց — արդէն ուշ էր։ Այնուամենայնիւ, յամառութեամբ, կոյր, խելաւոր մոլեռանդութեամբ առաջ քշեց—անգամ „լուսաւոր", Աբդիւլ-Մեջիդեան շրջանի մէջ—„աստիճանական բնաջնջման" քաղաքականութիւնը հանդէպ քրիստոնեայ ռայաների, որ հասաւ իր գագաթնակէտին կարմիր Սուլթանի օրով։

Այդ քաղաքականութիւնը—մանաւորապէս հայերի

վերաբերմամբ—հաւատարմօրէն շարունակեցին անգամ Թիւրք սահմանադրական կառավարութիւնները։

Եւ ահա հետևանքը։ Թուում էր թէ էն սկզբից այդ ահագին պետութիւնը օժտուած էր ապրելու, յարատևելու մի քանի գրաւականներով. նա ունէր դեմօկրատիկ, ռամկավարական մի խոշոր գիծ,—ազատ էր ազնւականութիւնից—որ սուլթանները վաղուց ի վեր խորտակել էին յօգուտ իրենց անսահման ինքնիշխանութեան—ազատ էր դասակարգային տիրապետութեան այն աւերիչ ծայրայեղութիւններից, որ յատուկ են եւրոպական պատմութեան։ Ամեն ոք—ամենանւաստ ծագման տէր անհատն անգամ—կարող էր մտնել վարիչ պաշտօնէութեան մէջ, ամեն ոք, եթէ միայն ունէր պահանջած ձիրքը, կարող էր հասնել պետական ու հասարակական առաջնակարգ դիրքերի։

Եւ սակայն, չ՛ապրեց։ Չ՛ապրեց գուցէ հէնց այն պատճառով, որ կատարեալ էր սուլթանների ձեռքով այդ բռնի և վայրագ խոշտանգումը հասարակական էւոլիւսիոնի, որ այդ վերջինը արեւստականօրէն դուրս էր նետուել իր բնական ճանապարհից, ջնջել էին ֆէօդալական ազատականութեան հետ՝ ընկերային շերտաւորման ու առաջադիմութեան մի քանի թոյլ գրաւականները... Չ՛ապրեց, որովհետև այդ խոպան, նախապատմական „հաւասարութիւնը“ տիրում էր միայն իսլամական աշխարհի մէջ, մինչդեռ քրիստոնեայ ազգերի հանդէպ շարունակւում էին ճորտատիրական, աւելի վատթար՝ սարկատիրական յարաբերութիւնները։ Չ՛ապրեց, որովհետև—նոյն գոռոզ, արհամարհոտ ընթացքի շնորհիւ — այդ քրիստոնեայ ժողովուրդները դարերից ի վեր դուրս մնացին զինւորագրութիւնից և զինւորական ծառայութիւնը ահեղ թափով ծանրացաւ Անատոլուի Թիւրք աշխատաւոր գիւղացիութեան վրայ, աւերելով նրա առանց այն էլ գաճաճ, անյոյս տնտեսութիւնը։ Չ՛ապրեց, որովհետև ինքը օսմանեան պետութիւնը — որ եզակի է համաշխարհային պատմութեան մէջ իր առասպելական ամլութեամբ — բնաւ երբէք չհոգաց երկրի տնտեսական բարգաւաճման, հողագործութեան, առևտրի, ճամբաների մասին, այլ միայն վատնեց, վատնեց...

Ի՞նչ զարմանք՝ որ պետութիւն կոչուած այդ ողբալի կոնգլոմերատը հասաւ և այսօրինակ եզակի մի վախճանի։ Դեռ զարմանալի է, որ կարողացաւ 6 դար ապրել—և այն՝ Եւրոպայում։ Իր բնական կենսունակութիւնը չէր պատճառը, այլ արևմտեան պետութիւնների յարաճուն մրցակցութիւնը... մասնաւորապէս՝ մայրաքաղաք Պոլսի աշխարհագրական դիրքը, այնքան նախանձելի և հրապուրիչ, ուր այնքա՛ն շահեր են խճողուում ու զարնուում...

Ահա թէ ինչպէս ապրեց կենդանի լէշը։ Այժմ, վերջապէս, նա դուրս շպրտուեց իր եւրոպական գաղթավայրից և նետուեց Ասիա։ Այնտեղ նա կըզգայ ինքզինքը իր հարազատ միջավայրում։ Բայց այնտեղ ևս նա չի ապրի և չի բարգաւաճի, իբրև պետութիւն։ Այդ բառը մերժուած է Օսմանի հօրդաներին։ Այնտեղ ևս—Ասիոյ մէջ—նա կը հրաժարուի ստեղծագործող ճիգերից, կը մերժի ռէֆօրմները և վաղ թէ ուշ—թուում է թէ շատ շուտով—կը յօշոտուի ու կ՛անհետանայ վերջնականապէս։

Ահա արդէն Բ. Դուռը պաշտօնապէս ազդարարում է, որ չպիտի ընդունէ եւրոպական կօնտրոլը Հայաստանում։ Սակայն—ինչպէս իրաւամբ յայտարարում է Վիկտոր Բերար *Pour les Peuples d'Orient*-ի իր վերջին յօդուածի մէջ — դա պարզապէս ինքնասպանութիւն է, որովհետև փորձը, տասնեակ ու հարիւր տարիների փորձը վաղուց համոզել է, որ Թիւրք և ռէֆօրմ հակոտնեայ իրողութիւններ են, որ Թիւրքերի ձեռքով Ցաճկաստանը երբէք չպիտի բարեկարգուի և ուրեմն... պիտի յարատևեն նոյն հիմնական պատճառները, որոնք Բալկաններում, Մակեդոնիոյ մէջ առաջ բերին վերջի վերջոյ արտաքին միջամտութիւն ու գրաւում։

Դիլեմմը դրուած է—պարզ, անողոք, ճակատագրական։ Թիւրքիան կամ պիտի ձգէ իր ներքին վերանորոգման աշխատանքը Եւրոպային՝ կամ պիտի չքանայ իբրև պետութիւն։

ՅՈԳՆԱ՛Ծ ԵՆՔ

Մենք խաղաղութիւն փրկչէն սովրեցանք,
Նեղիչին ներել՝ աւետարանէն.
Մի՞թէ մենք այսօր պատուհասեցանք,
Մի՞թէ խաբեցանք մեր բարերարէն։

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

Ընդամենը մի քանի տասնեակ տարիներ առաջ այսօրուայ հպարտ ու յաղթական Բալկաններն էին մեր բախտակիցները։ Դարաւոր տառապանքի եղբայրներ՝ նրանց հետ էինք փոթորուում ու տապակուում այն նզովուած դժոխքի մէջ, որի անունն է Թիւրքական բռնապետութիւն և նրանց հետ էր, որ աշխարհն առաջին անգամ մեր դժնդակ վէրքերը տեսաւ։

Ցանկանքի ամոլներ, սակայն փրկութեան ամոլներ չ՛եղանք Բալկանների երջանիկ զաւակների հետ։ Փրկութեան արևը մի օր արևմուտքից ծագեց և նրա ցոլքերը՝ հեռաւոր հորիզոններից մեր աչքերը խտղելով, մեր ընդարմացած մարմինները չջերմացրին, մեր հոգիների դարաւոր մռայլը չցրեցին և հայ աշխարհի վրայ ծանրացած թանձր խաւարը չվանեցին։

Հայաստանը՝ ինչպէս այսօր խոշտանգուած ու արիւնաքամ, իզուր փորձեց մարտնչող ու յաղթական սլաւոնների կողքին տեղ բռնել աշխարհի բախտը տնօրի-

նողների առաջ։ Լալագին աղերսողի իր կեցուածքը, դողդոջ ու կարկառուն իր բազուկները, իր աղեխարշ ողբն ու կականը անզօր մնացին։ Կարեկցութեամբ մի պատառ հաց կը շպրտեն քաղցած շանն ու դռներում ոռնացող մուրացիկին, բայց ո՛չ ազատութիւն ազգերին։ Աղերսի ու պաղատանքի դաշտերում թէկուզ ծով արիւն հոսի, ազատութիւն չի ծլիլ երբէք։

Եւ աղերսող հայը հզօրների դռներից վերադարձաւ ձեռնունայն. և Հայաստանը՝ հինգ դարերից ի վեր մխացող, աւերը Հայաստանը, վերստին նստեց իր խրճիթների մոխիրների վրայ, իր խողխողուած զաւակների գերեզմանների առաջ։

Իրաւունք ունէր հայրենասէր բանաստեղծը բացականչել՝

Սլաւոնի ձեռքէն թափթփած շղթան՝
Քեզ պինդ կը կապէ խղճուկ Հայաստան։

Լքուած էինք, բայց դարձեալ ո՛չ մենակ. նորից բախտակիցներ ունէինք. այս անգամ մեզ հետ էին Կրէտէն ու Մակեդոնիան, մեզ պէս մոխիրների վրայ նստած, մեզ պէս անիրաւուած աշխարհի հզօրներից և մեզ պէս արդարութիւն ու ազատութիւն երազողներ։ Մեր գերագոյն ու տխուր սփոփանքն էր գէթ մենակ չլինել մեր տառապանքի ճամբաներում, մեր յոյսերի ու մեր ցաւի օրերում։

Եւ ահա Թիւրքական բռնապետութեան լուծը թօթափեց ո՛չ միայն Կրէտէն, ապա և՛ Մակեդոնիան, և՛ Էպիրոսը և՛ Թրակիան։ Դեռ երէկ գերի, սարուկ, Բալկանեան բոլոր ժողովուրդները փոթորկուած ծովի ալիքների պէս ծառացած ընկան Թիւրք պետութեան մրգլած, խարխլած շէնքի վրայ, խորտակեցին ու ցրիւ բերին դարաւոր ոճիրների այդ անիրաւ կառուցուածքը։

Այս անգամ իսպառ մենակ է Հայաստանը իր դարաւոր մարտիրոսութեան ճամբին, դարձեալ հին ու նոր մոխիրների վրայ նստած, դարձեալ խոշտանգուած ու արիւնաքամ։

Ի՞նչ յաւիտենական է մեծ բանաստեղծի մռայլ մարգարէութիւնը.

„Մեզ ազգ կազմելու ամենքն են խափան“։

***

Մենա՞կ...

Ո՛չ, մենակ չենք. արդէն ճաքուել է մի նոր բախտակից, որի անունն արտասանւում է հայանպաստ հաւաքոյթներում տառապող, արիւնլուայ Հայաստանի հետ։

Հայաստա՞ն և... Սիրիա։

Հարատանջ, վատաբախտ հայութիւն, Բալկաններից յետոյ՝ Կրէտէն մնաց քեզ բախտակից, ապա Մակեդոնիան, և այժմ էլ... Սիրիա, մինչև որ հասնեն Արաբիան ու Քիւրդիստանը...

Ա՜հ, ո՛չ, աղաչում եմ, ո՛վ հայութեան հեռաւոր ու մօտաւոր բարեկամներ, ո՛վ դուք բոլորդ՝ որ մեր վշտաբեկ, անիրաւուած ցեղի վիթխարի մարտիրոսութեան, մեր անլուր տառապանքի նուիրականութեան գիտակցութիւնն ունիք, խնայեցէ՛ք մեզ այս հեգնութիւնը։ Սիրիան նոյնքան է բախտակից Հայաստանին, որքան և Արաբիան, որքան և Քիւրդիստանը, աւազակ-մարդասպանների այս աւանդական որջը։ Միայն եղկելի կուրութիւնը կամ թունոտ նենգութիւնը, անպատկառ խեղկատակութիւնը կամ անյոյս ապշութիւնը կարող է հայ ժողովրդի կրած ամենօրեայ սարսափները, նրա գոյութեան վրայ կախուած արիւնոտ մղձաւանջը, անլուր մարտիրոսութեամբ սրբագործուած նրա աղաղակող դատը քրդական, արաբական, սիրիական „պահանջների“ հետ նոյնացնել։

Մակեդոնիան մեր վերջին բախտակիցն եղաւ. անօգուտ է փնտրել ուրիշը այս վերան Թիւրքիայում, ուր կրօնական գարշելի մոլեգնութիւնը ցեղերի համերաշխութեան դէմ անիծակուռ թունաւ է, որի թիկունքից աեղում է մեր գլխին — և միայն մեր գլխին — զոնդումի սև, յորդահոս անձրևը։ Մեր ապրած սոսկումներին, մեր թափած արեանը անծանօթ է Թիւրքիայի որևէ ժողովուրդ։ Մեր քաշած տառապանքին անմասն և մեզ սպառնացող վտանգին ո՛չ միայն ենթակայ չեն, այլ և ոմանք եռանդուն սատարիչներ են, որպէս քիւրդերը։

Զուր ժամանակաւորութիւն է այսուհետև բախտակիցներ փնտրել մեզ մեր մարտիրոսութեան ճամբին, վտանգաւոր պատրանք է ձեռք մեկնել, երբ ոչ ոք պէտք ունի այդ ձեռքը սղմելու։

Արաբների կուռ, անընկճելի ոգին, որ դեղինաներծայր անապատների բարկ արևն է թրծել, ոչինչ ունի ընդհանուր մեր իդեապաշտ, երազուն խառնուածքի հետ։ Իսլամի որբանով հպարտ, որ իր ծոցումն է, արաբը ազատ է եղել և ազատ էլ կը մնայ, ինչպէս և Սիրիան, որ հզօրապէս յենուել է Նապոլէոն III-ի կերտած աւանդութեանը։ Ո՞վ է մեզ հետ, Քիւրդիստա՞նը, որ իր ոճրագործ պետերի առաջնորդութեամբ ամեն օր անասնական բթամտութեամբ արիւն ու արցունք է սփռում հայ աշխարհի մի ծայրից միւսը։

Ո՛չ, մենք այլևս բախտակից չունինք. մեր դատը եզակի է, ինչպէս և մեր տառապանքը։ Բախտակիցներ ունեցանք միշտ մենակ մնալու համար. ցաւակիցներ ունեցանք, միշտ էլ մեր շղթաները թանձրացան։ Թո՛ղ այսուհետև մեր դատն էլ իր եզակի, իր մենաւոր վեհութիւնը պահի։

Եղբայրութեան կոչերը այլևս հեգնօրէն են հնչում մեր ականջներում. թողէք մեզ մենակ, մենակ...

Ցոգնա՞ծ ենք...

***

Ցոգնած ենք նաև մարդկային արդարութեան նզովուած դռները բաղխելուց. աղերսողի մեր տարածած բա-

զուկները ընդարմացան ունայնօրէն ու մեր ծունկերը կոշկոճեցին մարդասիրութեան ու գթութեան նենգաւոր, խաբուսիկ ճամբաներուն։ Ցասն անգամ մեր արդար, մեր անմեղ արիւնը վաճառքի հանեց և թագակիր գլուխներ ու իրենց անսիրտ արքանեակները այդ արեան գնով մեր շղթաներն ամրապնդեցին, մեզ լափող հրդեհը բորբոքեցին և մեր յոյսերը կլծոտեցին բորենիների պէս։ Դարերի փորձութիւնը մեզ ոչինչ չէր տուել, քաղաքական իմաստութիւնը միշտ ամենահազագիւտ բոյսն եղաւ հայ աշխարհում և մենք միայն աղերսեցինք, աղերսեցինք...

Ցմարդօրէն խաբեած ու լքեած՝ աղերսեցինք։

Ցենգօրէն մատնուած մեր դահիճներին՝ դարձեալ աղերսեցինք...

Եւ այսօր՝ երբ Թիւրքիան, մեր հարիւր հազար զոհերի արեան մէջ խեղդուած, վերջապէս հատուցանում է իր դաժաւոր ոճիրները, երբ ստրկացած ազգերը շորթում են իրենց իրաւունքները, իսկ մեծ պետութիւնները—մեծ, ճարպիկ վաշխառուներ—փութով յարդարում են իրենց ամենէն աղտոտ, ամենէն նողկալի հաշիւները սուլթանների մեռնող պետութեան հետ, մենք գնացինք կուելու Թիւրքերի շարքերում ազատարարների դէմ, որպէս զի յետոյ գթութիւն աղերսենք, ապատութիւն և իրաւունք մուրանք։

Անուղղելի լաւատեսներ, յաւիտենական դիւրահաւաններ, մենք վերստին ապաւինել ենք աշխարհի մարդասիրութեանը, մենք աղաչում ենք յանուն քաղաքակրթութեան, յանուն մեր անցեալի և ո՛վ միամտութիւն, 1895—96 թուերից յետոյ՝ յանուն կրօնի. քրիստոնեաներ ենք չէ՞, ինչպէս և Եւրոպան. ապա ուրեմն՝

Ապերա՛խտ Եւրոպ, յիշէ՛ հայերուն,
Դու շատ մի խաբուիր սուրի շաչիւնէ...

Եւ այս անարի, ապարդիւն ու մաշած յանկերգը հնչում է այսօր հայ աշխարհի մի ծայրից միւսը. և միայն հոգևոր պետերը, տարիքով ու խառնուածքով դէպի գետին են խոնարհած գլուխները, սարկական անարգ խաղաղութիւն փնտրող մգլած հոգիները չեն, որ օրինիբուն կրկնում են այս վաղուց հետէ ձանձրալի դարձած մրմունջը, այլ ամենքը, երէկուայ մարտիկն ու ըմբոստութեան փառաբանիչը, անգոյն մտաւորականն ու գիտակից հայը, ամենքը, ամենքը աչքերը դարձրել են դէպի արևմուտք՝

„Ապերա՛խտ Եւրոպ, յիշէ՛ հայերուն"...

„որովհետև մենք... Խորենացի և Եղիշէ, Փարբեցի և Դաւիթ Անյաղթ, որովհետև... մենք բիւզանդական հայ կայսրներ և ռուս բանակի հայ գեներալներ, որովհետև... մենք դպրոց, գրականութիւն, քաղաքակրթութիւն և"... ա՜հ, ի՜նչ սպանիչ, ի՜նչ անարգ, որքան ստորացուցիչ է այս բոլորը։ Եւ չկայ մէկը, որ փոխանակ „ապերախտ Եւրոպային" դառնալու, գէթ մի անգամ սուրը ձեռքին ծառանայ բարբարոս քրդի ու Թիւրքի առաջ, երբ նա պղծում է իր օջաղը, փախցնում է իր կինն ու աղջիկը, աւերում է տունը, քշում է հօտը, խողխողում է զաւակներին։ Չկայ մէկը՝ որ հուժկու հզօր ձայնով մռնչայ իր արդար ցասումը և իր բրօնզէ բազուկով նզովեած չարիքի մէջքը խորտակի։ Ահա թէ ինչի է սպասում Եւրոպան...

***

Անարգուած, արհամարհուած մուրացիկը փողոցների աղբ ու փոշու մէջ քաշ է տալիս իր մաշուած ոսկորները. „Աստծու սիրուն, գթացէ՛ք... քաղցա՜ծ եմ"...

Եւ մենք աշխարհի հզօրների դռներն ենք բաղխում՝

„Աստծու սիրուն, գթացէք, ախր Խորենացի, Եղիշէ, Եզնիկ, քաղաքակրթութիւն"...

Եւ ճարուեց մի Թիւրք կօմիկ, որ առանց ժպտալու, եկաւ աշխարհին յայտարարելու, թէ հայկական քաղաքակրթութիւն չկայ ու չի եղել, այլ կայ միայն քրդական քաղաքակրթութիւն, որ հայերը հին քրդեր են, ապա ուրեմն չկայ Խորենացի, չկայ Եզնիկ, չկայ Եղիշէ, այլ կայ միայն լոլո լոլո, նիզակ ու լոլո, վրան ու լոլո...

Իրաւունք ունի, լոլոի դարումն ենք ապրում։

Չէ՞ք հաւատում... նայեցէք դէպի արևմուտք, դէպի Ադրիատիքի արևելեան ափերը։

Ալբանիա՜, Ալբանիա՜...

Ո՞ւր է նա։

Սահմաններն անյայտ են, անցեալը՝ մութ, ծագումն առեղծուածական։ Ազգ չկայ, ինչպէս և չի եղել, դրա փոխարէն մի բարբարոս, արիւնռուշտ խուժան, որքան անգիտակից՝ նոյնքան վայրագ, որ դարեր շարունակ իր անունը անարգ կերպով կապել է Թիւրք բռնակալութեան ամենազազիր ոճիրներին։ Իւրաքանչիւր Թիւրք բռնակալ իր ամենասև դաւերի, արիւնի գարշելի խրախճանքների համար Ալբանիային է դիմել և Թիւրքական կայսրութեան ո՛չ մի գաւառ այնքան դահիճներ չի տուել, արդարութիւնը խեղդելու, որքան այս կատաղի լեռնականների որջը։ Ստրկացած, տրորուած ժողովուրդների սարսափն է եղել Ալբանիան, և ըմբոստութեան իւրաքանչիւր փորձ արիւնի մէջ է խեղդուել միշտ ալբանացու ձեռքով։ Դարեր շարունակ իր սուրը բռնակալութեան իսպաս դրած, ալբանացին դրա փոխարէն ազատօրէն կեղեքել, հարստահարել, արիւնաքամ է արել վաստակաւոր բոյային. յափշտակել է, ինչ հաճելի է եղել, հարուածել է ըստ քմաց, մորթոտել, խողխողել է ի հաճոյս։ „Զուլո՜ւմ, ո՛վ եղբայրներ, ալբանական զուլում"... Այս աղեխարշ աղաղակով էին դիմաւորում Հին-Սերբիայի քրիստոնեայ գիւղացիները սերբիական ազատարար եղբայրական բանակին։

Եւ ի զուր չէ, որ Բալկաններից մինչև հայկական բարձունքները տարածուել է ալբանական սարսափը, որ

Բալկաններում ուր չ՝ապաստանում, „արնաւուտ“ նշանակում է արիւնարբու գազան, որի անունը բաւական է ամենէն անհանգիստ մանուկներին օրօրոցում լռեցնելու։

Այսպէս արնաւուտն անցեալում։

Ի՞նչ արեց նա այսօրուայ մերն աչքի առաջ, երբ Բալկանի ըմբոստացած ժողովուրդները կատաղօրէն ծառացան և թիւրքական բռնապետութիւնը խորտակեցին։ Ալբանիան, հաւատարիմ իր անցեալին, բոլոր թափով թաւմբ կանգնեց նզուած բգնակալութեան ու գնաց քաղաքեալ ազատարար բանակներին, որպէս զի նրանց հարուածների տակ ընկճուած ոչ ընկրկած իր լեռներն ապաստանի։

Եւ այսպէս՝ պնցեալը սոսկումներով հարուստ, միշտ բռնակալների ձեռքին վատթար զէնք, տառապող ժողովուրդներին անասելի պատուհաս, որ ո՛չ գիր ունի և ո՛չ գպրութիւն, ո՛չ արուեստ, ո՛չ քաղաքակրթութիւն, որ գիտէ միայն հալածել ու յափշտակել, ահա Ալբանիան։

Սահմաններն անյայտ են, անցեալը՝ մութ, ծագումն՝ առեղծուածական։

Ի՞նչ փոյթ..

Վեց պետութիւններ, մեծազօր, քաղաքակիրթ պետութիւններ, „յանուն արդարութեան, իրաւունքի ու քաղաքակրթութեան“, եռանդով փնտրում են Ալբանիան, հազար կտորից կերտում, կազապարում են մի նոր պետութիւն, պատրաստում են մի ազգ, որ անգիտանում է ո՛չ միայն իր անցեալն ու ներկան, հապա և չգիտէ, թէ այս պահուս ի՞նչ է կատարուում իր շուրջը։

Թո՛ղ գիր ու գպրութիւն չ՝ունենան, թո՛ղ սահմանները անորոշ լինին, ի՞նչ փոյթ։ Աշխարհի մի անկիւնում, ուր անմատչելի լեռներ իրար գրկած սեգ կատարներով երկինք են բարձրանում, ուր մռայլ ձորեր ու կիրճեր փոթորիկների որոտն են կրկնում հեգնօրէն և ծովը փրփրած ժայռերն է կրծում, այնտեղ, այդ բարբարոս բարձունքներում, այդ անհիւրընկալ ափերին մարդիկ կան, որ գիտեն հարուածել, հարուածել և դարձեալ հարուածել։

Ահա ա՛յս է որ գիտէ Եւրոպան։

Ա՛յս է, որ պակասում է հային։

Խորենացի, Եղիշէ միշտ անզօր կը մնան, քանի չկայ հարուածող բազուկը, սուրն ու նիզակը, լոլոն, լոլոն...

* * *

Այսպէս Ալբանիան, եւրոպական Թիւրքիայի այդ քիւրդիստանը, ազատում է և պիտի ազատուի որովհետև գիտցաւ միշտ ֆարուածել, նոյնիսկ անիրաւ տեղը, գիտցաւ ըմբոստանալ՝ երբ իր վրայ եկան, գիտցաւ ազատ մնալ հաստատած բռնակալութեան ծոցում։

Իսկ մե՞նք...

Մենք խաղաղութիւն Փրկչէն նորընծանք,
Ընդդիմին ֆերել աւետարանէն,
Ներիր ինձ, իմ պաշտելի բանաստեղծ, այս երկտողը բաւական էր՝ զբ քո հոյակապ „Թայր Արաքսին“ և ռազմական „Բաւ է եղբարքը“ գոռնատուին. ի՞նչպէս կարողացաւ քո հպարտ քնարը այս անարի, այս ամօթալի տողերը յօրինել։

Եվ յետոյ թողնենք հանգիստ Փրկիչն ու աւետարանը, նրանք անմասն են մեր գժբախտութեան, մեր ցաւի մէջ։ Աւետարանն ու Փրկիչը ապաստանարան են ուրացանողմ այդ անարգ, մահացու խաղաղութիւնը արիւնարբու, կործվի ու կամքի տէր ժողովուրդները աւետարանի ու Փրկչի թիկունքին միշտ գիտցան փրենց գլխաւոր կերտել տիրօրէն։

Ո՛չ, աւետարանն ու Փրկիչը գոնէ չ՝ունին վէր դարաւոր ցաւի մէջ, աւելի ճշմարիտ է, որ՝

Մենք սորկութիւն պապերէն ուռանք,
Եւ ոտքերն ընկանք մեր նեղիչներին,
Սարկի լուծը սիրով յանձն առանք,
Շան պէս լիզեցինք ձեռքը դուշմանին.
. . . . . .
. . . . . .

Եւ յոգնա՞ծ ենք։

Ու փառք Աստուծոյ, որ յոգնած ենք սորկութիւնից, աշխարհի նենգ, կեղծ կարեկցութիւնից։ Յոգնած ենք գթութեան ու օգնութեան ունայն աղաղակներից, եղբայրութեան վաղանցուկ կոչերից՝ աղերսողի մեր կարկառուն բազուկները չորացան և մեր կրունկները պատառ պատառ արիւնոտեցին մարդասիրութեան անապատներում։

Յոգնա՞ծ ենք։

Եւ լաւ է, որ յոգնած ենք։

Գուցէ վերջապէս մենք մեզ ազատենք։

ՏԱՐԱԳԻՐ

„ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ

ՆԵՎՐՈԾԸ

Քանի այսպիսի յաղթանդամ և գեղեցիկ հասկեր է հնձել սուլթանական մանգաղը...

Այս փոքրիկ նկարը չէ, որ կարող է գաղափար տալ „Դաշնակցութեան“ քաջասիրտ աթլէտի մասին։ Պէտք էր տեսնել կենդանի և սպառազէն նեվրուզին՝ իր հսկայ հասակով և վրէժխնդրութեամբ վառուած աչքերով։

Ո՞վ չի տեսել, ո՞վ չի սիրել Ներն... Պարզ, համեստ ժողովրդածին զինուորն էր, հաւատարիմ ու երդուեալ ապստամբը, կազմակերպութեան սիրոյ՝ օժտուած սպասաւորը՝ իր սրտի թիւրեղեայ մաքրութեամբ և անսահման անձնազոհութեամբ։

*

Մարմարայի ափին, Ռոգոստոյի Ս. Խաչ թաղը ծնուած, բարեկեցիկ ընտանիքի զաւակ էր նեվրոնը։ Նախնական

կրթութիւն առնելէ յետոյ, սկսաւ զբաղիլ ծխախոտի մշակութեամբ։ Համիդեան բէժիմի շնորհիւ ծխախոտի բէժին շատ մը վնասներ հասցնելով՝ Օննիկը ձգեց այդ ճիւղը ու հաստատուեց իբր նպարավաճառ։

Ամուսնացած էր „ազնիւ ու անձնուէր Էպրուկի“ի հետ, ինչպէս ինքն էր ասում։ Ունէր չորս զաւակ — 2 մանչ, 2 աղջիկ։

Նեվրուզ ծնած էր Հայրենասէր և ամեն անգամ, երբ կը խօսէին Հայաստանի մասին, ա՛խ կը քաշէր սրտի խորքերէն։ Շատ անգամ տանը կը տեսնայիր երեք-չորս տարեկան զաւակներու ձեռքը մէկ-մէկ գաւազան տուած և ինքն էլ առջևէն մի սուր բռնած՝ հայրենասիրական երգերով թափօր կը կազմէր անոնց հետ։

Դառնալով փոքրիկներուն, կ'ըսէր.

— Տղա՛ք, դուք Հայաստանի զինուոր պիտի ըլլաք, իսկ ես՝ պահեստի։

1894-ին, երբ Կազմակերպութիւնն արդէն հիմք ձգած էր Պոլիս, ձմրան ղրկեց իր վարիչներէն մէկը Ռօդոստօ։ Սա շուտով ճանչցաւ ու գնահատեց Նեվրուզի հայրենասէր ու ազնիւ հոգին և դիմումն արեց նրան։ Նեվրուզ ընդունեց մեծ ոգևորութեամբ և 3 ընկեր գտնելով, կազմեց Ռօդոստոյի Կոմիտէն։ Իր ընկերներն ալ մեծ հաւատքով փարեցին Դաշնակցութեան։ Քիչ յետոյ Նեվրուզ արդէն կազմակերպած էր տասնեակ խմբեր, երկու թաղերուն մէջ։ Երբ „Դրօշակ“ը քիչ մը ուշանար, ինքն անձամբ Պոլիս կերթար ստանալու։

Մեծ ոգևորութիւն առաջ եկաւ Ռօդոստոյի մէջ։

Քանի մը ամիս յետոյ, Պոլսոյ Կ. Կոմիտէն ղրկեց իր ներկայացուցչի հետ Ռօդոստո „Դաշնակցութեան“ կնիքը։ Այդ օրը երեկոյեան, ոգևորութիւնը մեծ էր։ Ընկերները հաւաքւեր էին մէկու մօտ հինգերորդ ընկերոջ ներկայութեամբ, որը տակաւին չէր „մկրտուած“, բայց կը փափագէր ներկայ լինել այդ հաւաքոյթին։ Երբ Կ. Կ.-ի պատուիրակը մի քանի ոգևորիչ խօսքերով բացատրեց իւրաքանչիւրի պարտականութիւնը հանդէպ յեղափոխութեան և ապա հանեց գրպանէն խորհրդաւոր կնիքը՝ Նեվրուզ խկոյն իր ձեռքն առաւ այն՝ և ջերմեռանդ կերպով ֆամբուրեցաւ։ Նրա օրինակին հետևեցան միւս ընկերները, բացի հինգերորդէն, որ ինքզինքը տակաւին անարժան կը սեպեր հաղորդուելու կնիքը։ Այդ միջոցին Նեվրուզ իր կարող ձայնով պոռաց.

— „Տղա՛, ա՛ռ հաղորդուէ, սա քո խաչէդ սուրբ է“։

Այդ օրէն Նեվրուզ ուրիշ բան չէր տեսներ, այլ միայն Հայրենիքը, որի համար պատրաստ էր մեռնելու։

Կոմիտէի որոշումով սկսաւ զէնքեր բերել Ռօդոստո, աներկիւղ անցնելով պահակներու մօտէն։ 95-ի ջարդերէն վերջ, երբ կառավարութիւնը շնորհաւորական գիր կուղէր ռօդոստացիներէն, ազգային ժողովը հաւաքւել էր խորհրդակցելու համար, թէ ինչ ձևի տակ գրել այդ գիրը։ Նեվրուզ վերջի պահուն իմանալով ժողովի գումարման մասին, առանց իմաց տալու ընկերներուն, կ'առնէ մի քանի կարիճ տղաներ ու ինքը որպէս առաջնորդ, պահականոցի մօտէն կ'անցնի առաջնորդարան։ Դռնապանը արգելք կը հանդիսանայ, առարկելով, որ ծանր խնդրոյ մը համար կը վիճեն ներսը։ Նեվրուզ կը պատասխանէ, թէ ճիշտ ինքն ալ այդ ծանր խնդրի համար եկած է և կուզէ ներս մտնալ։ Քիչ յետոյ իր երկու կարիճներով կը ներկայանայ ժողովին և հետևեալ յայտարարութիւնը կ'ընէ.—



Նեվրուզ

„Ցանուն Ռօդոստոյի դաշնակցական կոմիտէի կը յայտարարեմ, եթէ այդ շնորհաւորական գիրը տաք, ամենքդ ալ պատասխանատու էք Դաշնակցութեան առաջ“։

Ժողովականները շլացած, իրար ետևէ կը հեռանան ժողովէն ու այդպիսով հակառակ կառավարութեան ստիպումներուն, շտրեցաւ պահանջած հանրագրութիւնը։ Ոստիկանութիւնը կը հետաքրքրւի Նեվրուզի անձնաւորութեամբ, սակայն առաջնորդարանը կը պատասխանէ, թէ „հրդեհաշէջներու կողմէն եկած էր“... Ատկէ ի վեր սևագլուխները մի կատարեալ արշաւանք

սկսեցին Օննիկի դէմ, անոնց հետ և դոքտ. Դինանեան, փաստաբան Շուշանեան ու ընկ։

Կոմիտէն որոշեց հանգանակութեան սկսիլ. Նեվրուզ յանձն առաւ գործին գլուխ անցնիլ՝ հակառակ ոստիկ. հսկողութեան։ Մի շարք դժուարութիւններ առաջ եկան։ Հարուստը կուզէր քիչ վճարել ու սակարկութեան կ'ելլար, իսկ բանւորն ու երկրագործը սիրով կը տային իրենց լուման։ Նեվրուզը իր պարտականութիւնը կատարեց, նոյնիսկ Ս. Խաչի օրը ոստիկանապետի ներկայութեամբ կը շարունակէր ժողովարարութիւնը՝ „աղքատներուն նպաստելու" անուան տակ։ Ոստիկանութիւնը շատ լաւ գիտէր բուն նպատակը, միայն երկիւղէն ձայն չէր հանէր։

Եւ շուտով Ռոքսսոս տուեց մօտ 1000 ոսկի։ Ապա նեզրուզ անցաւ Մալգարա, կազմեց կոմիտէ ու պէտք եղած հանգանակութիւնը ընելէ վերջ, անցաւ Բուլգարիա՝ զէնքերու փոխադրութեան համար։ Մատնութեան շնորհիւ չյաջողեցաւ։

Ներբակալութիւնէ խոյս տալու համար՝ Օննիկ Ֆեդռացաւ Ռոքսսոյէն։ Երբ 96-ի Պանքայի դէպքէն ետք հանդիպեցայ զինքը Բուլգարիա, լալով մօտեցաւ ինձ և ասաց.—„Ինչո՞ւ ինձ ալ չկանչեցիք, որ ես ալ մասնակցէի այդ մեծ գործին՝ իմ ռոքսսոցի քաջերով"... Խոհարարութիւն կ'ընէր Օննիկը. ցնցոտիներու մէջ, երկու ամսան կերակուր եփած՝ կըսպասէր իր յաձախորդներուն... Կ'ապրէր թշուառագոյն օրեր՝ սեփական աշխատանքով։

Սիրտը միշտ հոն էր—Հայաստանի մէջ։ Կը կարդար, „կը կըլլէր" յեղափոխական գրականութիւնը, կըզմայլուէր մեր ֆէդայիներու սխրագործութիւններով և կարօտով ու անհամբեր կըսպասէր այն օրուան, երբ ինքն ևս հրացանն առած պիտի նետուէր կռուի դաշտ։ Երբ 1896-ի վերջերը Վարազ-Վահան (Վռամեան) և քիչ ետքը Վարանդեան պրոպագանդի պատոյտ կ'ընէին Ռումանիոյ մէջ, անոնց ուշադրութիւնը կը գրաւէր այդ հոյատիպ, ցնցոտապատ խոհարարը, որ յեղափոխութիւնը կը պաշտէր իր մանկական մաքուր սրտով, կը յաձախէր բոլոր ժողովները, կ'ունկնդրէր խանդավառութեամբ ատենաբաններուն և կ'աղաչէր՝ զրկել զինքը Հայաստան, հայդուկային խմբերու հետ։

Հետաքրքրական էր Նեվրուզը գաղութային բազմամարդ ժողովներուն մէջ, ուր կը խօսէր համարձակ, ժողովրդական իր պարզ, անպաձոյձ բառաբառով։ Ահաւոր հեղինակութիւն էր նա վատ, բանսարկու հակառակորդներու հանդէպ, որոնք կուգային թունաւորելու և խանգարելու ժողովները իրենց կրքոտ միջամտութիւններով։ Նեվրուզի մի նայուածքը բաւ էր՝ զինաթափ ընելու ամենաանսանձ կրքերը. և անոր ներկայութեամբ սովորաբար կը տիրէր ժողովներու մէջ կարգ ու անդորրութիւն։

Յեղափոխութիւնը անոր աչքին մէջ նոյնանիշ էր „Դաշնակցութեան"։ Անկէ դուրս կը տեսնէր միայն թայփաներ, որոնք իրարու միս կուտէին և՝ անկարող ըլլալով ոևէ դրական գործ կատարելու՝ կը ձգտէին լոկ ուրիշներու ըրածը քանդելու։ „Դաշնակցութիւնը" Նեվրուզի համար կուռ, միաբան կազմակերպութիւնն էր, որ երբէք չպիտի պառակտուէր, երբէք անձնական, դատարկ փառասիրական ձգտումներ չպիտի հիւրընկալէր իր մէջ... Ահա թէ ինչու Նեվրուզ կը պաշտէր անոր դրօշակը և գուրգուրանքով, տեսակ մը կրօնական ջերմեռանդութեամբ կը դիմաւորէր „Դաշնակցութեան" գործիչներուն, կը կատարէր հնազանդութեամբ անոնց ամեն մի հրահանգը։

Ցեղ մը չէր կրնար երկար նստիլ. ծախելով իր ճաշարանը՝ մակեդոնական խմբի հետ միասին անցաւ Թիւրքիա։ Այդ խմբի նպատակն էր՝ յեղափոխական սընտուկի համար քանի մը հարուստներ լեռ տանիլ ու փրկանք պահանջել։

Ապա գաղտնի մտաւ Ռոքսսոս՝ իր վրէժը լուծելու դիտաւորութեամբ։ Սակայն կառավարութիւնը իմացած ըլլալով անոր գալը, Նեվրուզ բարեկամներու խնդրանքով նորէն հեռացաւ իր ծննդավայրէն։

Քիչ ետքը անցաւ Թիֆլիս, ուր տեղի կունենար Դ-թեան Ընդհանուր Ժողովը։ Նպատակն էր՝ երկիր մտնալ, բայց ճամբաները գոց ըլլալով, ք'անցնի Օդեսսա, վաճառականի մօտ ծառայելու։ 1900 թուին „ուխտի" կ'երթայ... Ժընէվ։ Կուզէ մօտէն տեսնալ խմբագրութիւնն ու գործիչները, որովհետև... շարամիտ հակառակորդները քանիցս փորձեր էին խախտելու Նեվրուզի հաւատքը, ըսելով որ՝ „մինչ ինքը և իր ընկերները կեանքերնին կը զոհեն հայրենիքի համար՝—Ժընէվի մէջ խմբագիրները քէյֆերով կըզբաղուին"։

Շտեսաւ այդ „քէյֆերը"։—և աւելի ևս ամրապնդուեց Նեվրուզի մոլեռանդ հաւատը դէպի կազմակերպութիւնը։

Երկու-երեք տարի ևս հառաջանքի ու կարօտութեան մէջ քարշ տուեց իր թափառական կեանքը։ 1904-ին Նեվրուզը, վերջապէս, հասած էր իր բաղձալի նպատակին. նա ընդունուած էր „Դաշնակցութեան" մեծ արշաւախմբի մէջ, որ կ'երթար Սասուն Անդրանիկին օգնելու, բայց որ զարնուեց ճամբու վրայ թիւրքական և բրդական անհամար խաժամուժին... Ցեղի ունեցաւ Բասենի անմոռանալի ճակատամարտը, որու մասին այնքան պատկառոտ վկայութիւններ կուտայ անգլիական „Կապոյտ գիրքն" իսկ։ Հայ քաջերը ընկան բուռն, անհաւասար կռուին մէջ, խլելով մեծաքանակ զոհեր թշնամու բանակէն։ Մերոնք կռուեցին անսովոր կատաղութեամբ, ձգտելով պատռել շղթան և սլանալ դէպի Սասուն, ուր բռնկած էր ապստամբութիւնը. սակայն ի վերջոյ ընկճուեցին ջախջախիչ ուժի առջև։

Մահադիթ գնդակը գետին փռեց և թէքիրտաղցի հսկային։

Բոլոր անոնք, որ գէթ ակնթամբ մը տեսնած ու զրուցած են Նեվրոզի հետ, երբէք չեն մոռնար այդ հոյակապ և անձնուրաց զինուորը, այդ պարզ, ազնիւ նկարագիրը, որ ջինջ անձնաւորումն էր հայաստանցու լաւագոյն առաքինութիւններուն։

„Անձնուէր Էպրուկը", հաշտարարիմ իր սիրելի ամուսնոյ յիշատակին, „այսօր սրբութեամբ կը կատարէ անոր կտակը, կը գաղափարակէ իր կդրիւնները հայրենասիրական ոգով կը հրաժարի կազմակերպական ու ազգաշակցութիւններէ և իր սեփական աշխատանքով կը պահպանէ „հայրենիքի զինուորին" ընտանիքը։

ԺԱԿ-ԼԵՒՈՆ

ՆՈՐ ԾԻՐԻՄՆԵՐ

Պօսրանում են կամաց-կամաց „Դաշնակցութեան" հինաւուրց զինուորների շարքերը։ Դեռ հազիւ քառասունին հասած՝ նրանք արդէն հիւծնում ու խորտակուում են իրենց կրած զրկանքների ահաւոր բեռի տակ... Դրիտասարդ է մեռնում հայ ֆէդային, հայ յեղափոխական ռազմիկն ու քարոզիչը, անգամ ամենէն ուժեղն ու ամրակազմը։

Եւ գնում է այդ երիտասարդ-ծերերի փառաւոր լեգէօնը, գնում է դէպի անդարձ յաւիտենականութիւն՝ դեռ անէծքը շրթունքներին, վրէժի ու արդարութեան չյագեցած ծարաւով, իրենց վեմ երազների իրագործման կէս-ճամբուն։

Էրզրում ցանուցին Տուրբախի մահը։ Էրզրում էր ապաստանել երկար ժամանակից ի վեր կովկասցի արկածաւոր ֆէդայինն և սիրել էր աղէտների ու առաջին ընդվզումների հայաշունչ միջավայրը, ուր 15 տարի առաջ անկեալ էր իր պաշտելի ընկերոջ, իր Թաթուլի կախաղանը։

Ահա դեռ պարզ տեսնում եմ երկուսին Ղարսի գիշերային ընկերական խնճոյքի մէջ, 1895-ի աշնան օրերին։ Շարէ շար նստած են „հին լեգէօնի" բազմաթիւ ներկայացուցիչները, հարիւրաւոր զինուորներ, որ պատրաստուում էին անցնելու կարմիր սահմանագիծը, գնում էին դէպի վահ, ուրախ, անհոգ, երգելով ու պարելով... Թաթուլ, Հրայր, Ներսէս, Տուրբախ, Նադօ... Հնչում է մեղամաղձոտ երաժշտութիւնը, սազի ու քամանչայի մերթ զւարթ, մերթ ողբաձայն շեշտերի տակ՝ տղերքը կատարում են փրենց քէյֆը, որից յետոյ վարգապետ, սպառազինուած, իրենց երկու սիրեցեալ հրամանատարների գլխաւորութեամբ՝ պիտի բռնէին արիւնոտ ճանապարհը։

Այնուհետև ալ չտեսայ Տուրբախը։ Ֆրբեանի-երբեանի արշիվները քրքրելիս տեսնում եմ հին, խոնացած դրամ մապանակը, որ տեղ էր ինձ նոյն խորհրդաւոր գիշերային խնճոյքին իր „Երկիր" մտնելու նախօրեակին։

„Ուրեմ բան չունիմ, տաղ իրը յիշատակ — ծրնէվ"...

Յօտ քսան տարի — բուռն, անգուշ, յուզումնալի գործունէութիւն, ցրղղած դէպի հարազատ ժողովրդի երջանկութեան իդէալը, շնչաւորուած մի վառ, անսասան հաւատով... Մերթ Մուշի գաշտերում քրդերի դէմ կռուելիս, մերթ Սպարուն, մերթ Կովկասց Հիրակի, Ղարս, Թիֆլիսի մէջ, ծառացած Գոլիցինեան հարուածների ու թաթարական խուժանի դէմ։

*

Մէջ ուրիշ մահ գուժեցին մեզ Կ. Պոլսից, նոյնքան վաղաժամ և ցաւառիթ։ Վախճանուեց իր ծաղիկ հասակի մէջ „Դաշնակցութեան" ամենակտրիճ տեքնօրիստներից մինը, յայտնի Վարդ կեղծանունով *), որ մաշել էր իր երիտասարդ կեանքը Համիդեան զնդանի չորս պատերի մէջ։

Երկար է պատմութիւնը մեր այդ զոյգ նահատակ ռազմիկների — Ն դեռ երկար ժամանակ նա կը մնայ սեփականութիւն ընկերական նեղ շրջանների։ Քայլկան ծովը դեռ շարունակում է իր արիւնոտ ծփանքները, հայ նահատակութեան վիթխարի գերեզմանոցը դեռ շարունակ հարստանում է նորանոր շիրիմներով, որոնց տակ ամփոփուած հարուստ ու յուզիչ կեանքերի վրայից ստիպուած ենք անցնել կցկտուր, հակիրճ ու ժգոյն նօտերով։

Մ. Վ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏԱՐԲԵՐԻ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆ

I

Հայ քաղաքական երեք համալսարանները Վանայ մասնաճիւղերը, համաձայնութեան դալով, հետևեալ հեռագիրը ուղղած են Վարչապետին.

Հայ ժողովուրդի հանդէպ կիրարկուած եղեռնական, վրդովիչ և խելագար քաղաքականութեան մը հետևանքով՝ մեր, ինչպէս նաև հայաբնակ բոլոր նահանգները արագաքայլ կը դիմեն կորստեան անդունդը։

Եթէ ցարդ մենք լռեցինք, ի յարգանս պետութեան ամբողջութեանը սպառնացող պատերազմին, այսօր լռելը այլ ևս դաւաճանութիւն մը կը համարենք հայ ժողո-

*) Երկու վաղամեռ ընկերների կենդանագիրները, յուսով ենք, կը հրատարակենք մօտ ապագայում։

վուրդի և օսմանեան պետութեան ընդհանուր նուիրական շահերուն։

Գալով մեր նահանգին՝ վարչութիւնը, ժանտարմերին, ոստիկանութիւնը, դատարանը, խօսք մէկ ըրած, երթալով աւելի ուժգին և սիստեմատիք կը հետապնդեն օրինական և ապօրինի բոլոր միջոցներով մէկ և միակ նպատակ մը—որ է ճնշել, ճզմել, քայքայել և ոչնչացնել հայ ժողովուրդի բովանդակ կենսական ուժերը։

Օրէնքը կը գործադրի միմիայն նպաստաւորելու համար քիւրդ չարագործը և միմիայն հարուածելու համար աշխատաւոր հայ ժողովուրդը։

Ժանտարմերին ու ոստիկանութիւնը կոյր կը ձևանան՝ չտեսնելու համար քիւրդ չարագործներու զինեալ խումբեր, որոնք կը վխտան ճամբաներու վրայ, բայց ստրուճանակ մը իսկ երբ գտնեն հայուն քով կը գրաւեն։

Մեր պաշտօնէութիւնը անտարբեր է քիւրդ և թիւրք խառնակիչներու հանդէպ, որոնք սպառնալիքով ու ծեծով կը զինեն քիւրդ գիւղացիները և այլանդակ սուտերով կը գրգռեն զանոնք հայերու դէմ,—բայց իրեն բան ու գործ շինած է բանտերը լեցնել հայ գիւղերու մէջ աչքի զարնող անհատներով։

Դատարանը չձերբակալեց Ռափայէլ Երէցեանի և Մարտիրոս քահանայի պէս յարգելի անձերու սպանութեան բուն հեղինակները, բայց Հաճի Եաղուպի պէս աւազակի մը սպանութեան հետ ոՀԷ առնչութիւն չունեցող բազմաթիւ անմեղ գիւղացիներ ամիսներէ ի վեր կը չարչարէ բանտերուն մէջ, անոնց գիւղը զինուորական ջնկատով գրաւել ուած է և ամբողջ գիւղախումբը սարսափի մատնած։

Քաղաքական այս հետապնդումներու շնորհիւ՝ հայ փախստականներու թիւը կը հասնի արդէն հարիւրի և օրը օր երթալով կ՚աճի, անծրծալ դրութիւն մը ստեղծելով Վանի կուսակալութեան մէջ։

Զինեալ յարձակումներու և մօտալուտ աղէտներու մղձաւանջին տակ՝ շատ գիւղեր վար տ՚ ցան չեն ըներ, և ահա նոր չարիք մը՝ սովն է, որ կը սպառնայ իր զարհուրելի հեռանկարովը։

Մեր պատասխանատուութեան տակ՝ ներկայացնելով այս տողերը ձեր վսեմութեան նախագահած դահլիճին, մեր իրաւունքն ու միանգամայն պարտականութիւնը կը համարենք պահանջել անյետաձգելի բարենորոգումներով իրական երաշխիք մը հայ ժողովուրդի պատուին, կեանքին և ինչքին՝ ափ մը քիւրդ տերէպէյիներու դէմ, որոնք տզրուկն են իրենց իսկ սեփական քիւրդ ժողովուրդին, և ապիկար ուղղակարար պաշտօնէութեան մը դէմ, որ կը բաղալերէ ու կը հովանաւորէ զանոնք։

Ռուսէլիի գլխուն եկած աղէտներէն չի կրնար խուսափիլ Անատոլուն ևս, եթէ ժամ առաջ կարուկ միջոցներով վերջ մը չդնէք կործանարար այս ռէժիմին։

Հ. Ց. Դ. Վասպուրականի Կեդր. Կոմիտէ
Ս.-Ռամկ. Կուսակց. Վանի Շրջ. Կոմիտէ
Ս.-Դ. Հնչ. Կուսակց. Վանի Մասնաճիւղ։

II

Գահիրէի մէջ, յունիս 8-ին, Միջկուսակցային Խառն Մարմնի նախաձեռնութեամբ ու ներկայութեամբ բազմամարդ ժողով, նուիրուած Հայկական դատին և Ազգային համերաշխութեան։ Ժողովին նախագահում էր պ. Տիգրան Կամուրջեան։ Հայ Ցեղ. Դաշնակցութեան կողմից խօսեց ընկեր Ակնունի։ Խօսեցան և պ. պ. Ց. Աճառեանեան, Պարթևեան, Եասրեան, Մեսրեմիթեան։ Ժողովը խանդավառ ընդունելութիւն տուեց „Դաշնակցութեան" ներկայացուցչին, որի նախաձեռնութեանն ենք պարտական այդ հազուագիւտ և աջող միթինգը։ Հայերի հետ միասին խօսեցան մի քանի ազդեցիկ օտարականներ — մի արաբ շեյխ և հրապարակագիր Ժորժ Վէյլի, Մակս Կոլլադօ—արտերէն և ֆրանսերէն։ Ժողովի որոշումը—ընդունուած միաձայն և մեծ խանդավառութեամբ—ամփոփ ձևով հեռագրուեց Եւրոպա և լոյս տեսաւ խոշոր օրգանների մէջ։ Ահաւասիկ միթինգի Ցայտարարութիւնը, ուղղուած Եգիպտահայ գաղութին.

Հայրենակիցնե՛ր,

Հանրային հպարտութիւնով և սրտագին հաճոյքով մըն է, որ կուգանք յայտարարելու այս համերաշխութիւնը՝ իբրև քաջալերող նախանշան մը Եգիպտոսի հայ գաղութին քաղաքական զարգացմանը։

Ներշնչուած այն մեծ պարտականութենէն, որ հայ դատին ներկայ պատմական րոպէն կը դնէ մեր ժողովուրդին բոլոր հատուածներուն և բոլոր դաւանանքներուն վրայ, և խորապէս գիտակից թէ որքան կարևոր է, այդ բացառիկ կացութեան հանդէպ, քաղաքական բոլոր ուժերուն ներդաշնակ համագործակցութիւնը, հայ կուսակցութիւններու Եգիպտոսի տեղական մարմինները՝

Դաշնակցութեան ենթակոմիտէները,
Հնչակեան մասնաճիւղերը և
Սահմանադրական Ռամկ. Ակումբները

որոշեցին շաղկապել իրենց ուժերը, յանուն երկրի հայ ժողովրդին ինքնապաշտպանութեան, իրաւունք մը, որ խորապէս Սահմանադրական է և որուն պահանջը, իրերու տխուր բերումով, դարձած է օրուան մեծագոյն խնդիրը։

Քաղաքական այս շաղկապումին գործնական կերպարանք տալու համար, երեք Կուսակցութիւններու տեղական մարմինները, անվերապահօրէն համամիտ ինքնապաշտպանութեան գաղափարին շուրջ, որոշեցին կազմել Միջկուսակցային Խառն Մարմիններ՝ Աղեքսանդրիա և Գահիրէ, նպատակ ունենալով գործնականապէս և նիւթապէս նպաստել Երկրի ժողովրդին Սահմանադրական իրաւունքներուն պաշտպանութեանը, անոր քաղաքացիական ու ազգային ապահովութեանը, ինչպէս նաև գալիք վտանգներուն դիմագրաւելու ուժին։

Նպատակը, կազմը և փոխադարձ յարաբերութիւնները ճշտելու համար, Միջկուսակցային Խառն Մարմինը, միացած, մշակեց ներքին կանոնագիր մը, որ արժանացաւ երեք Կուսակցութիւններու ընդհանուր ժողովներուն հաւանութեանը և որ պիտի ըլլայ ղեկավարը՝ յառաջիկայ գործունէութեան ժամանակ և ամբողջ աշխատանքի ընթացքին մէջ։

Համերաշխութեան և համագործակցութեան այս ձեռնարկը խանդավառ համակրանք մը առաջ բերաւ թէ՛ կուսակցական շարքերուն և թէ՛ հասարակութեան մէջ, ինչ որ լաւագոյն գրաւականն է այդ ձեռնարկին զարգացմանը։ Տարիներու և տարիներու անվերջ կռիւները, ներքին սին ընդհարումները և ուժերու աննպատակ վատնումը, որոնցով այնքան հարուստ է, աւա՜ղ, եգիպտահայ կեանքը, վերջ պիտի գտնեն այս նոր հոսանքին առջև, և անոր շնորհիւ, համոզուած ենք, բոլոր կենսունակ ուժերը, բոլոր եռանդները ու բոլոր հիմնարկութիւնները պիտի ծառայեն գլխաւոր նպատակին, — երկրին և քաղաքականապէս բարձրացող հայ ժողովուրդին՝ իր սահմանագրական ու ազգային իրաւունքներուն ամրապնդմանը համար։

Համերաշխութեան այս ձեռնարկը սահմանափակուած չէ կուսակցական շրջանակով։ Անիկա կը ձգտի, վճռականապէս և անկեղծօրէն, այս աշխատանքին կապել Եգիպտոսի հայ գաղթականութեան բոլոր խաւերը, իր այլ և այլ հիմնարկութիւններով, և մենք կուզենք հաւատալ թէ այս ճամբուն վրայ, ազգային մեծ տագնապին հանդէպ, չպիտի հանդիպինք ոչ մէկ արգելքի, քանի որ այս շարժումն ու իր նպատակը կուսակցական չեն, այլ համաժողովրդական, նոյնքան թանկ չէզոք հասարակութեան համար՝ որքան յեղափոխականին, նոյնքան հրամայական անկուսակցական ժողովուրդին համար՝ որքան կուսակցական շարքերուն։

Ներկայ շարժումն ու ձեռնարկը, որուն իրագործմանը շատոնց փափաքող է վտանգուած հայ ժողովուրդը, իր դրդապատճառներուն անկեղծութեամբը և նպատակին մեծութեամբը, չի ներեր և չպիտի ներէ ոևէ երկդիմութիւն, դաւ կամ նենգաւոր թշնամանք։ Ընդհակառակը յանուն մեր ժողովուրդին գերագոյն շահերուն, անիկա պէտք է հանդիպի, իր արդէն փշոտ ճամբուն վրայ ամէնքին կողմէն, կուսակցական թէ՛ չէզոք, արհնաւոր թէ վաճառական, մտաւորական թէ՛ աշխատաւոր, բացարձակ համակրութեան, անկեղծ յարգանքի և գործնական աջակցութեան։

Թո՛ղ ուրեմն, համագործակցութեան այս ձեռնարկը Եգիպտոսի տասնեհինգ հազար հայութեան մէջ՝ ըլլայ շրջանը նոր եռանդի և նոր յոյսերու և գերեզմանը՝ հին, աւերիչ կրքերուն։ Անիկայ թո՛ղ նկատուի միևնոյն ժամանակ իբրև նշանը սրտագին և հրապարակային այն յարգանքին, որ Հայ Յեղափոխութիւնն ու Հայ Գաղութը կը բերեն մեծատանջ Հայ ժողովուրդին ու Մայր-Երկրին՝ անոր քաղաքական տագնապի այս երկունքաւոր օրերուն մէջ։

Պառակտումները ուժերը վատնեցին։

Համերաշխումը ուժեր պիտի ամբարէ։

Ողջո՛յն ուրեմն համերաշխութեան ու միջկուսակցային համագործակցութեան։

Ողջո՛յն Հարիւրոդովուրդին, որուն կոչուած են ծառայելու բոլոր կուսակցութիւններն ու գաղութները։

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ
ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱՅԻՆ ԽԱՌՆ ՄԱՐՄԻՆ
ԵԳԻՊՏՈՍԻ

Աղէքսանդրիա—Գահիրէ
1913 Մայիս

ՎԵՐՋՆԱԿԱՆ „ԼԻԿՎԻԴԱՏԻՕՆԻ“ ՀԱՆԴԷՊ

Շշուկները քանի գնում, աւելի և աւելի որոշ ու ստոյգ կերպարանք են առնում և, տարաբախտաբար, գրեթէ կասկած չկայ, որ մենք գանուում ենք Թիւրքիոյ վերջնական բաժանման նախօրեակին... Գերմանիայի և մանաւանդ Ռուսաստանի որոշ ժեստերն ու քայլերը, Կիլիկիոյ և Մեծ Հայքի սահմաններում՝ այդ դիտաւորութիւնն են մատնում։ Եւ գուցէ կնքուած է արդէն նախնական համաձայնութիւնը շահագրգռուած պետութիւնների միջև... Վերջապէս, ի՞նչ են այդ նոր սահմանուած „ազդեցութեան շրջանները“, եթէ ոչ նախադուռ հիմնական բաժանումի։

Եւ այդ աղէտը Թիւրքիոյ համար վրայ կը հասնի այնքան աւելի շուտ, որքան աւելի կը յամառին Թիւրքերը իրենց տարաժարժ, հակակրելի ընթացքի մէջ հանդէպ ճնշուած ժողովուրդների։ Եթէ նրանք աճապարէին ընդունել եւրոպական կօնտրոլի սկզբունքը և այդպիսով խաղաղացնել երկիրը՝ ասիական Թիւրքիոյ ամբողջութիւնը կարող էր փրկուել, գէթ երկար ժամանակով։

Սակայն դժուար է սպասել մի այդպիսի բայլ երիտասարդ Թիւրք կուսակցութիւնից, որի մէջ բացի աւանդական ու անդարմանելի ռուտինից, գործում է այսօր նաև սրարշաւ կազմալուծման պատուհասը։ Զրկուած իր լաւագոյն առաջնորդներից, նա մի անղեկ նաւ է այսօր, մատնուած ի սաստ փոթորիկների։ Ամենահաւոր չարիքը ներքին պառակտումն է, պարբերական իրարասպանութիւնները, որոնք շուտով կարող են հասնել խոշոր չափերի, նոր պետական հարուածների, լիակատար անիշխանութեան և... վերջնական բաժանութեան։

Վերջին մուսուլման պետութիւնն ևս, ըստ երևոյթին, կը կորցնէ շուտով իր քաղաքական անկախութիւնը, կերթայ միանալու Մարոկկի, Պարսկաստանի ճակատագրին, մի աւելորդ անգամ ապացուցելով, որ իսլամական համայնքները անկարող են, անընդունակ՝ յարատևելու, վերածնուելու և բարգաւաճելու, իբրև ուրոյն քաղաքական միութիւններ...

ՌՈՒՍԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՌԷՖՕՐՄՆԵՐ

Գերմանական մամուլի յարաճուն հետաքրքրութիւնը Հայաստանի և հայկական ռէֆօրմների շուրջը՝ ըստ երևոյթին սպատիկ մատանջ է անում ռուս կառավարական շրջանները և սրանք ևս ամեն կերպ աշխատում են յետ չմնալ։ „Նօվօյէ Վրեմիա"ն մասնաւորապէս մի անսովոր եռանդ է ցոյց տալիս իր հայանպաստ հրատարակութիւններով։ Կառավարութիւն և մամուլ ամեն կերպ ձգտում են հասկացնել, որ հակահայ քաղաքականութեան շրջանը անցեալ է անդառնալիօրէն և որ Պետերբուրգը որոշած է պաշտպանել ամենալայն բարենորոգումների ծրագիր Թիւրքահայաստանի համար։ Այդպէս էր յայտարարում նորերս պարիզեան „Temps"-ի մէջ հրատարակուած պետերբուրգեան իր թղթակցի մի կարևոր հեռագիրը, որ ամենայն հաւանականութեամբ ներշնչուած է ռուսական կառավարութիւնից։

Վերջինը խոստովանում է այդ հեռագրով, որ Գերմանիայի բռնած նոր դիրքն է, որ փոխել կը տայ իր, ռուսական կառավարութեան, մինչայսօրեայ ընթացքը հայոց հարցում։ Եւ — որ ամենէն ուշագրաւն է այդ հեռագրի մէջ—Ռուսաստանը ուղղել է նորերս շրջաբերական մեծ պետութիւններին, հրաւիրելով նրանց քննել տալ Կ. Պոլսի դեսպանական ժողովի մէջ բարենորոգումների մի ծրագիր, որի հիմն է 1895 թուի նախագիծը։

Դեսպանաժողովը Կ. Պոլսում, ըստ երևոյթին, այժմ արդէն զբաղուած է այդ խնդրով։

Եւ ահա արդէն հեռագիրը հաղորդում է, որ դիւանագէտների այդ չարաշուք խորհուրդը նորէն յետ է մղել եւրոպական կենտրոնի սկզբունքը և պիտի յանձնի ռէֆօրմների գործը սուլթանի կառավարութեան, տալով նրան իբր օգնական եւրոպացի իրազեկներ, „ընդարձակ լիազօրութիւններով"...

Սպասենք, սակայն։

En attendant, քրդերը վերսկսել են մասսային խժդժութիւնները, և ահա Սարըղամիշի վրայով մեր ստացած մի հեռագիր գուժում է Միր Մահէի նոր յարձակումը Բոլոզքէսան հայ գիւղի վրայ... Վալին իր 400 մարդկանցով յետ է նահանջել... „Քրդերը քշել են հայոց նախիրը և 15 մարդ էլ անհետացել են"...

Քիչ յետոյ կը պարզուի, անշուշտ, այն առեղծուածը՝ թէ ինչպէ՞ս է վալին 400 մարդկանցով յետ նահանջել Միր Մահէի քրդերի առջև...

Քիչ յետոյ կը պարզուի նաև, հաւանականօրէն, թէ մինչև որ աստիճան Ռուսաստանը պիտի ցանկանայ և աջողի վերջ տալ Թիւրքաց Հայաստանի անիշխանութեան, քիւրդ աշիրէթների վայրագութիւններին։

„ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ" ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅՈՒՄ

Նորէն հարցապնդում „Դաշնակցութեան" ու Լիժինի մասին ռուսական պարլամենտում։ Եւ մի անգամ ևս հանդէս եկաւ ժամանակակից ռուս մինիստրի մտայնութիւնը հայ ժողովրդական կուսակցութեան վերաբերմամբ։

Կերենսկի կ. Աչէմեան հարցումներ ուղղեցին տխրահռչակ Շչեգլովիտովին՝ „Լիժինեան գործի" առթիւ, պահանջեցին բացատրել, թէ ինչպէ՞ս է, որ կեղծարար ու „խելացնոր" քննիչի զոհերը տասնեակներով շարունակում են տնքալ աքսորի ու տաժանակիր աշխատանքների մէջ։ Ինչպէ՞ս է, որ „Դաշնակցութեան" գործը չի վերաքննուում, ինչպէ՞ս է, որ պահպանուում են դատավճիռները այնպիսի մարդկանց ու արարքների վերաբերմամբ, որոնց նախնական քննութիւնը յանձնուած է եղել մի խելացնորի և ծայրէ ի ծայր լի է ամենաբիրտ կեղծիքներով...

„Դաշնակցութեան" գործը առիթ բռնելով, մի շարք հռետորներ հուժկու ոճով խարանեցին ժամանակակից ռուսական արդարադատութիւնը, արտասանեցին մեղադրականներ մինիստր Շչիգլովիտովի դէմ։ Մէկը նոյնիսկ յայտարարեց, թէ իր խորունկ համոզումով քննիչ Լիժին կատարել է իր կեղծիքները „Դաշնակցութեան" գործի մէջ՝ „ի վերուստ հրամանով"։

Շչեգլովիտով, արդարադատութեան մինիստրը, պատասխանեց... Նախկին ձևով։ „Դաշնակցութիւնը ձգտում է անջատել Հայաստանը Ռուսաստանից"... Ի՞նչ հարկ կայ վերաքննելու, երբ իրենք իսկ դատապարտուած դաշնակցականները չեն պահանջում վերաքննութիւն... Վերջապէս, չէ՞ որ նրանցից վեց հոգի խոստովանել են արդէն, որ պատկանում են այն „յանցաւոր կազմակերպութեան", որ նպատակ է ունեցել անջատելու Հայաստանը Ռուսիայից...

Ահա չինովնիկ-նախարարի պատասխանը, որ նոյն հին, սովորական պատճառաբանութիւնն է, սովորական և կոպիտ խեղաթիւրումը ակներև իրողութիւնների... Այնքան փաստաբաններ ամբողջ ամիսների ընթացքում փաստ ի ձեռին ապացուցին, որ Հայ Մարտական Կազմակերպութիւնը բնաւ երբէք չի ունեցել անջատական ձգտումներ, որ այդպիսի ձգտումների հետքը չկայ նրա ծրագրի ու տակտիկի մէջ, որ այդ ծրագիրը, ընդհակառակը, կապել է միանգամ ընդմիշտ հայութեան, ռուսահայութեան ճակատագիրը Ռուսաստանի ու ռուս ազգի հետ... Ոչի՞նչ հետևանք. „Դաշնակցութիւնը" հայակեր չինովնիկների աչքում դարձեալ նոյն ռուսատեաց, „անջատական" ուժն է...

ՊԱՏՄԱԿԱՆ

XII

ՆԵՐՔԻՆ ՈՍՈՒԽԸ

ՀԱՑ ԿԵՂԵՔԻՆ ՏԱՐԲԵՐԸ

Ամդա, սարրաք, վաշխառու.—Գիւղական տանուտէրներ եւ զանազան պաշտօնեաներ.—Լրտես, մատնիչ, դաւանան.—Հայ ուսեալ դասակարգերը օսմանեան ռէժիմի տակ.—Կղեր եւ վանառականութիւն.—Մօրից վագեերի վիայութիւնը.—Հայ բուրժուազիան ազատագրական պայքարի հանդէպ.—Պաշտական դաւանանութիւն.—Քրիստաճօրի դատաստանը.—Հայկական շարժումը չ'եղաւ ազգային, այլ ժողովրդային.—Անտիքեզի աղէտաւոր եւ նպաստաւոր կողմերը.—

Հայ աշխատաւոր ժողովուրդը սաստկապէ՛ս տառապել է նաև այդ ներքին ոսոխի շահագործութիւններից ու դաւերից, և երբ մենք գրում ենք հայ շարժման նախապատմութիւնն ու պատմութիւնը, երբ ուզում ենք ուրուագծել այն դարաւոր հարստահարութիւններն ու զուրկումները, որ կրել է իր վտիտ թեւերի վրայ այդ հալածական ժողովուրդը՝ քրդիստանցիկի, զափտիէի, միւլթեզիմի, վաշխառուի և բոլոր գիշատիչների միջավայրում, երբ փորձում ենք ի ցոյց դնել և այն թոյլ ու վեհերոտ ազատագրական ձիգերը, կուի, ըմբոստացման այն աղօտ նշոյլները, որ այդ ժողովուրդը հանդէպ է բերել իր ցաւոտ, եղերական պատմութեան մէջ, իր բազմաթիւ ոչ բազմապիսի թշնամիների դէմ, երբ փորձում ենք անդրադառնալ այն անհաշիւ ու անյաղթելի խնչընդոտների վրայ, որ ցցուել են ճանկոտգրական նզովքի պէս ազատութեան այդ դժնդակ պայքարի ճանապարհին,—մեր միտքը ակամայ սահում է դէպի այն սև կատէգորիան, այն հարազատ ու համարիչն լեգէօնը, որ իբրև անգիտակից կամ գիտակից մի ազդակ, ահագին ներ է բռնում հայկական մարտիրոսութեան պատճառների շարանի մէջ, որ այնքան յաճախ ու առատօրէն ջուր է թափել բռնակալութեան հայակործան ջրաղացի վրայ, նպաստաւորել, դիւրացրել է նրա շարաշուք ծրագիրները, դարբնել և կռել է հարազատ ժողովրդի գեղութեան շղթաները, մերթ իբրև դաւաճան, ցատնիչ օտարի մօտ, մերթ իբրև շահախնդիր հակառակորդ բոլոր ազնիւ դատերի, անուղղակի ստատրող ազգայնական ինչ ծրագիրների, մերթ իբրև բացարձակ պարազիտ, ազրուկ, կեղեքիչ հայ-ժողովրդական վաստակի, քրտինքի ու արիւնի...

Հայ ցեղերի անիծապա՛ռ „դիմակարգը“.

Նա չի ներկայանում, իբրև համատարը, միապաղաղ մի կատէգորիա. այդտեղ կայ վաշխառու, կայ կղեր, ազա, ջոջ ու չորպաճի, սեզանաւոր ու սարրաֆ, կառավարական այլ և այլ պաշտօնեաներ, մեծ մասամբ այլասերուած, իսպառ զուրկ ազգային ու մարդկային նկարագրից։ Ամենէն նուազ հակակրելին այդ բազմապիսի տարրերի մէջ գուցէ „ամիրայ“ կոչուած հայ արիստոկրատներն էին, բայց նրանց տիպարն էլ բնորոշեցինք արդէն մեր նախորդ էջերի մէջ։ Փաշաների դրամատոխներ էին, նրանց հլու կամակատարներ, յաճախ նոյնիսկ կատարում էին միւլթէզիմի, հարկահաւաքի դեր և կեղեքում իրենց հարազատ ժողովրդին *)...

Գուցէ երբէք, ոչ մի ուրիշ երկնքի տակ, տանջանքի և պայքարի ոչ մի հայլ միջավայրում՝ փատատական այդ լեգէօնը չի մատնել այնքան ցինիզմ ու աներեսութիւն, այնքան կոշտ ու արհամարհոտ անտարբերութիւն դէպի արիւնակիր ժողովրդի դատը, ինչպէս այդտեղ։

Դիտեցէք, թէ ինչպիսի թունոտ կատաղութեամբ են խօսում մեր ազգային երեսփոխանները այդ ներքին ոսոխի մասին 70-ական թուականների խռովայոյզ նիստերի մէջ, երբ քննւում էր գաւառական հարստահարութիւնների խնդիրը։

Գաւառաց մէջ իշխան անունով խել մը բռնակալներ կան—ասում էր երեսփոխաններից մէնը, Մազլումեան էֆէնտի 1870 նոյեմբեր 21-ի նիստի մէջ—կան նաև անխիղճ առաջնորդներ (ներեցէք, որ այսպէս նանուանեմ զանոնք). ասոնց ազդեցութիւնը ջնջելու և ազգային պաշտօնեաներէ զերենք հեռու պահելու միջոցները խորհելու է։

Նոյն Մազլումեան էֆէնտի յաջորդ նիստի մէջ որոշում է „ներքին բռնաւորների“ տիպը. դրանք չօրպաճիներն են, որ „ժողովրդեան վրայ անողոքաբար ծանրացած, զանի կը կեղեքեն և կը ճնշեն“։

Մի այլ երեսփոխան, Օգսէն էֆէնտի, դասակարգելով հարստահարութիւնների մայրապատճառները, նոյնպէս յիշատակում է արտաքին հետ և ներքին դահիճներին, որոնց բաժանում է երկու դասի.

1. Ազգային անպաշտօն մարդիկ (չօրպաճի, լրտես և այլն)։
2. Ազգային պաշտօնական մարդիկ (կառավարական գործակալներ)։

Երեմիա եպիսկոպոսը, խօսելով հայաստանցու կրած հարստահարութիւնների մասին, յիշատակում էր, իբրև չարիքներից մին, հայերու „ներքին անմիաբանութիւնը, մատնիչ ու դաւաճան հայերը“։

Վաշխառութեան և նրա արդիւնքը— աւերածի ու թշուառութեան մասին պարապիեցուցիչ տեղեկութիւններ էր տալիս ինքը պատրիարք Խրիմեան.

... Վաշխառութիւնը ատոյգ է, զի 100-ին 40 վաշխ կառնուի։. Եւ այնպէս տեղեր գտնուեցայ, ուր մեռնող մարդուն համար քանի մը կանգուն կտաւ չը գտնուեցաւ և քիչ մը խոտի մէջ պատեցին խեղճ մարդն ու թաղեցինք։ Դուք տեսե՞ր էք այնպիսի խիղճ կին, որ իւր զաւկին պատանք չը գտնայ և իր պատուաւոր հագուստէն կտոր մը պատռէ ու զաւակը պատատէ։ Ալ աւելին պատմեմ ձեզի. տեսած եմ Ս. Կարապետի վանուց մէջ, որ 20-էն աւելի տղայք կը շարուին դրան առջև ձմրան եղանակին մերկ ու դողդողուն։ Ռուսիայէն եկած ուխտաւորներ կը հանեն շապիկներ կուտան անոնց **)...

*) *Ubicini, Lettres sur la Turquie II vol.*
**) Ատենագրութիւնք Ազգ. Ժողովոյ 1870 թ.։

ենթադրենք նոյնիսկ թէ խրիմեան դիտմամբ խաբնում էր գոյները... Ո՞վ չգիտէ սակայն, որ վաշխառութիւնը հայկական իրականութեան ամենաահաւոր պատուհասներից մինն է եղել միշտ և ամեն տեղ, թիւրքիայում, թէ Կովկասում և որ նա գործում է իր սանձաձգակ քսակը մասնաւորապէս քաղաքական ռեժիմի մթնոլորտում, ուր վաշխառուն զգում է ինքզինքը, ինչպէս ձուկը ջրի մէջ։ Ո՞վ չգիտէ, որ մակաբոյծների այդ նոյնպիսի և գերազանցապէս կոսմոպոլիտ տեսակը իր ահարկու հպելիքներով ցանցապատել է հայ գիւղը և անգամ զուլումի ու ժողովրդական հոգեվարքի օրերին անխնայ ծծել է հայ բազմատանջ աշխատաւորի հիւթերը։

Մի այլ պատուհաս — գիւղական տանուտէրներն էին և այլ մանր կառավարական պաշտօնեաները։ Գրեթէ ամեն տեղ, ուր հայ մարդը առել է ֆը վրայ պաշտօնական որևէ տիտղոս ու համազգեստ, գրեթէ միշտ նա ապազգայնացել է, զրկուել մարդկային կերպարանքից, ճշմարիտ մակաբոյծի պէս յարմարուել է տիրող ռէժիմին և մահմեդական պաշտօնեաների հեզ թև թևի տուած ծառացել է իր հարազատ ժողովրդի դէմ։ Զարմանալի չէ, որ վերջին քառորդ դարու ազատագրական կռուի ընթացքում հայ տերրորիստի մանգաղը սուրուած էր եղել այնքան առաջ հունձ անելու այդ մարդկանց միջավայրում։

Վեր հանելով միլլէթզիմների աւերիչ շահատակութիւնները հայկական գաւառի մէջ, նոյն 1870-ի Ցեղեկագիրը չէր մոռանում յիշատակելու և գիւղական տանուտէրների մեղսակցութիւնը, նրանց յօժարակամ աջակցութիւնը միլլէթզիմներին.

Այս պարագային մէջ, գիւղապետաց օգնութեամբը աղքատն ամեն տեսակ տառապանաց կ'ենթարկուի։ Դէպի կը քաշկռտուի, կը տրորուի, կը բանտարկուի...

Վերջապէս, ներքսէս Վարժապետեանի նախագահութեամբ կազմուած նոյն քննիչ Ցանձնաժողովը իր զեկուցման մէջ շեշտում էր, որ թիւրք կառավարութեան պաշտօնեաները օգտուում էին գաւառացի „քնիկ մեծատոնց ազդեցութենէն“, հայ ժողովուրդը շահագործելու և հարստահարելու նպատակով։

Այդ նոյն մեծատունները կամ գաւառական հայ աղաները, իրենց դրամի զօրութեամբ ձեռք բերելով հաչակ ու ազդեցութիւն, լինելով վալիի, միւթէսարրիֆի, գայմագամի բարեկամներ, սովորութիւն ունէին յաճախ նոյնիսկ հերքելու այն լուրերն ու տեղեկագիրները կատարուող զեղծումների մասին, որ հայ ժողովուրդը լալով ու աղերսելով ներկայացնում էր իր պատրիարքին և որ վերջինը ներկայացնում էր բարձր իշխանութեան...

Ահա քննիչ Ցանձնաժողովի վկայութիւնը.

... Բ. Դրան հրամանագիրը կ'երթայ վալիին, անկէ ալ միւթէսարրիֆին և գայմագամին և խպատասխանոյ տեղեկագրով մը կը սատուի (կը հերքուի)... Դժբախտաբար, հայն ալ կը ստէ զայն, կամ առակնկալութեան, ինչպէս կ'ընեն գաւառական իշխանութեանց մօտ գրտնուող աղաները, կամ ֆրկիւղի, առ ինչպէս կ'ընէ ժողովուրդը...

„Մասիս“ լրագրի 1871 թ. սեպտ. 10-ի համարում զետեղուած գաւառական մի նամակ (Վանայ Ցոսպ գաւառից) նկարագրում է հայ չօրպաճիների, ազգային ջոջերի և կղերի կեղեքումները.

Սահմանագրութեան լոկ անուն մը կայ, սակայն, գժբախտաբար, ինքը չկայ... Վասպուրականի անձնուէր պէյերը և էֆէնտիները դպրոցաց համար ճիգ թափելէ կը զլանան, այլ եկեղեցւոյ ստակը հաւաքելոյ համար (ժողովրդից. Մ Վ.) աշխոյժ ու եռանդով կ'աշխատին, ըստ որում իրենց քսակ կ'ինջնայ այդ հանգանակութիւնը...

Ահաւասիկ ներքին հայատիպ ոսոխի մօտաւոր պատկերը։

Հալածանքը ազգային էր — այո։ Սուլթանական լուծն, այո՛, միացած իսլամական կրօնի այլամերժ հաւատամքի հետ, հալածում էր հային ընդհանրապէս, իբրև որոշ ցեղի և կրօնի պատկանող էակի, և երբ հնչում էր կոտորածի շեփորը՝ Մահմեդի հաւատացեալները խտրութիւն չէին դնում հարստի ու աղքատի միջև, զարնում էին հայինդ լինէր նա մեծատուն կամ մուրացիկ, աշխարհական կամ քահանայ։

Սակայն, անշուշտ, սխալ կը լինէր ենթադրել, թէ օսմանեան ռէժիմը, թաքանի և սպանութեան դարաւոր քաղաքականութիւնը հաւասարապէս ծանրացած է եղել հայութեան բոլոր դասակարգերի վրայ։ Քաղաքական ճնշումը և տնտեսական աւերածը ահեղ թափով ծանրացել է բուն ժողովրդի, երկրագործ ու արհեստաւոր զանգուածի վրայ, այն ինչ բարեկեցիկ տարրերը կարողացել են ընդհանրապէս յարմարուել և տեղ-տեղ նոյնիսկ աճեցնել իրենց հարստութիւնը ժողովրդական համատարած թշուառութեան մէջ։ Անգամ ջարդի խուճապների օրերում, այդ տարրերը կարողացել են յաճախ իրենց դրամի ու կապերի շնորհիւ իսկ՝ ազատել իրենց կեանքն ու ստացուածքը։ Իսկ նորմալ, „խաղաղ“ շրջաններում հայ ունևոր դասակարգը — քանիցս արդէն նկարագրել ենք մեր տեսութեան նախընթաց էջերի մէջ — ունեցել է անտեսապէս բաւական ֆնխանձելի դիրք, թէ մայրաքաղաք Պոլսում, թէ ծովեզերեայ այլ քաղաքներում և թէ բուն Հայաստանում։

Ինչպէս որ պօլսական ամիրան, բանկիրը, սարրաֆը, փաշաներին ու այլ կարգի մեծերին հնչիւն գրամ փոխառելով, վայելել են նրանց հզօր հովանաւորութիւնը, այնպէս և հեռաւոր գաւառներում, հայ ունևորը, մեծատունը — մի խոշոր առևտրական, մի հարուստ կարաւանապետ — աջողել են միշտ գրամով ու այլ տեսակ ծառայութիւններով սիրաշահել տեղական իշխանութիւնները, բարեկամանալ վալիների հետ և գրա շնորհիւ միշտ աւելի ու աւելի մեծացնել իրենց գործի ծաւալը և հարստութեան չափը։

Բազմաթիւ էին դրամի այդ իշխանները հայ կորած ու լքուած գաւառի մէջ և թւում է թէ ըստ ամենայնի անդունդ կար չքաւոր ու տառապող հայ ժողովրդի և այդ տնաբոյս դրամատէր իշխանների միջև...

Մ ո ր ի ց Վ ա գ ն ե ր, 40-ական թւականների ճանապարհորդ-գիտնականը, իր ծանօթ աշխատութեան մէջ *) մի քանի անգամ ընդգծում է հայ խոշոր և ազդեցիկ դրամատէրերի ներկայութիւնը Թիւրքաց Հայաստանի մէջ։ Եւ դեռ 1828-ի ռուսական արշաւանքից յետոյ ահագին թւով հայ հարուստ վաճառականներ թողել էին Էրզրումի վիլայէթը և անցել էին Կովկաս։ Միւս մասը—թերևս ամենէն անվախ, համարձակ և ձեռնարկու տարրերը—գերադասել էին մնալ երկրում և շարունակել իրենց արդիւնաւոր—թէև վտանգալի—ձեռնարկները կարաւանների մեծ ճամբու վրայ...

Նկարագրենք երկու խօսքով—և Մորից Վագների բառերով—այն ժամանակւայ **) հայ տիպիկ գաւառական իշխանին։ Դա մի նշանաւոր կարաւանապետ է.

Կարաւանը, որի հետ ես Հասան Կալէով գնում էի Պարսկաստան, գտնւում էր մի հարուստ հայի հրամանատարութեան տակ. անունն էր Կարագեօզ և մեծ հռչակ ուներ Էրզրումի մէջ։ Ամեն տարի նա Էրզրումի վալիին նւեր էր բերում զարաբաղական ցեղի մի սիրուն ձի։ Մարդը խոշոր դիրք էր վաստակել, ամեն տեղ մտնում էր, փաշայի բոլոր ստորադրեալներին, պաշտօնեաներին առատ առատ բ ա խ շ ի շ էր տալիս։ Այդ հանգամանքն այնպէս էր սիրաշահում տաճիկներին, որ Կարագեօզի „գիավուր“ լինելը բոլորովին մոռցնել էր տալիս և դիւրութեամբ կատարում էին նրա ցանկութիւնը, այսինքն միջոցներ էին տալիս՝ կարաւանը հովանաւորելու... Նա կրում էր Կարաւան-բաշի հպարտ անունը...

Կարաւանը բաղկացած էր 360 ձիուց, որոնց կէսը Կարագեօզի սեփականութիւնն էր։ Մնացածը պատկանում էր մեծ մասամբ դարձեալ հայերի։

Զինուած էին — ասում է Վագներ — այդ ահագին կարաւանն առաջնորդող բազմաթիւ հայերը և ամեն անգամ երբ ընդհարում էր տեղի ունենում քրդերի հետ, նրանք—հայերը—քաջաբար պաշտպանւում էին... Իսկ քրդական յարձակումները սովորական երևոյթ էին. „Կարաւանների անցուդարձերին—շարունակում է Վագներ—ամենուրեք, հայոց Ալպերի կիրճերի մօտ թափառում էին քրդերը իրենց նախիրներով և պատրաստ էին գայլի ոռնոցով յարձակումներ գործել ճամբորդների վրայ ***)։

Վագների յիշատակած Կարագեօզը միակը չէր, հարկաւ իր տեսակի մէջ։ Կարագեօզները լեգէօն էին։ Հընչուն դրամը, որ առատօրէն դիզում էին նրանք իրենց հեռաւոր և ընդարձակ առևտուրի մէջ, գնում էր կաշառելու հզօրների սրտերը և դրամի շնորհիւ նրանք իրենք դառնում էին մի մի իշխաններ իրենց ցեղային միջավայրում։

Խոնարհ, ստրուկ երկրպագու մահմեդականն զօրաւորների առջև—նրանք դաժան ու ամբարտաւան էին իրենց հարազատ ցեղակիցների հանդէպ։ Նոյն հոգեբանութիւնը տեսանք արդէն Կ. Պոլսի ամիրաների մօտ։ Նոյն այլասերուած մտայնութիւնը—և այն ժամանակւայ հայ կղերի մէջ։ Լսեցինք արդէն նոյն Վագների խարանող ածականները իր տեսած և ուսումնասիրած հայ լուսաւորչական կղերի մասին.

Kriechend, demüthig, bettelhaft gegen europäische Reisende, — herrschsüchtig, hartherzig und geizig gegen ihre Heerde, besonders gegen ihre ärmeren Glaubensgenossen...

„Ստորաքարշ, նւաստ ու մուրացիկ եւրոպացի ճամբորդների առջև — նրանք (հայ վանականները) գոռոզ են, բռնակալ, կարծրասիրտ, ժլատ իրենց հօտի և մանաւանդ չքաւոր հաւատակիցների հանդէպ“...

Զափազանցութիւն չկայ այդ հակիրճ և վշտաբեր բնորոշման մէջ։

Այդպէս է եղել հայ կղերի դասակարգային էութիւնը յընթացս ամբողջ պատմութեան, այդպէս է եղել և հայ աղայութեան դասակարգային պատկերը սկզբից մինչև մեր օրերը։ Անհատականացառութիւններ եղել են, անշուշտ,—նրանք եղել են գրեթէ բոլոր դասակարգերի ու հասարակական խաւերի մէջ — բայց ընդհանուր, հաւաքական պատկերի մէջ տիրապետել է միշտ վերոյիշեալ բացասական գիծը։

Եւ գո՞հ էին, բնականաբար, այդ կիսով չափ ապազգայնացած տարրերը իրենց պատմական ու սոցիալական միջավայրում. գո՞հ էին Կարագեօզները, դրամի բոլոր իշխանները, որ վայելում էին առանձնաշնորհումներ, հռչակ, պատիւ և խրոխտաբար առաջ էին մղում առևտրական իրենց ձեռնարկները, քիւրդ ու այլ աւազակների մշտական սպառնալիքների մէջ, պահպանելով յարաբերութիւն փաշաների և օտար հիւպատոսների հետ, արհամարհելով իրենց դրամական լեռների բարձունքներից հայ աշխատաւոր, չարքաշ, մերկ ու անօթի ժողովուրդը, որ տնքում էր թիւրք-քրդական խարազանի տակ։

Գո՞հ էին իրենց վիճակից, միջնադարեան ֆէօդալ-բռնապետական ռէժիմից՝ այն գաւառացի և հայազգի մեծատունները, որոնք Քննիչ Ցանձնաժողովի արտայայտութեամբ „ստում էին“՝ բացասում հայ ժողովրդի տանջանաց յիշատակագիրները, ժխտում էին այդ ժողովրդի ամենատարրական իրաւունքները, անգամ խընդրելու, աղերսելու իրաւունքը։

Գո՞հ էին, լա՞ւ էին զգում իրենց լարած սարդոսպ տայնի մէջ գիւղապետներն ու վաշխառուները, դաշտաճաններն ու ազգուրաց լրտեսները և բոլոր երկոտանի սողունները, որոնց համար քննադատութիւնը միակ ընտ

*) *Reise nach Persien und dem Lande der Kurden* (Ուղևորութիւն դէպի Պարսկաստան և դէպի քրդերի երկիրը)։

**) 40-ական, 50-ական թւականների։

***) *M. Wagner, Reise...* էջ 284։

գունելի ուժիմն էր խաւարը՝ միակ շնչելի մթնոլորտը։

Գո՛հ էին Կ. Պոլսի ամիրաները, որ գարշելով գարշում էին հայ-ժողովրդական ցոյցերից, ժողովրդի ու մտաւորականութեան միջամտութիւնից ազգային գործերի մէջ... Գոհ էին և տրամադիր յաւերժացնելու իրենց բռնաւոր խնամակալութիւնը ժողովրդի վրայ, իրենց կապտային դրշմը հայկական ճակատագրի վրայ։

Գո՛հ էին 50-ական ու 60-ական թուականների „խաւարեալները“, որ կատաղօրէն մարանչում էին Սահմանագրութեան ու „լուսաւորեալ“ տարրերի դէմ և թշնամու ձեռքն էին մատնում հայ ազատամիտ երիտասարդներին։

Գո՛հ էին 40-ական թուականների վսեմափայլ ջոջերն ու „ազգասէր“ աղաները, որ Ազգային Ժողովի մէջ յօրանջելով էին ունկնդրում գաւառական հարստահարութիւնների զեկուցանողներին, որ բնաւ չէին ուզում „հայկական խնդիր“ հանել, կառավարութեան աչքին կասկածելի երևալ և որ այնքան աշխատեցին վիժեցնելու Ցեղեկագիրը, հակառակ ժողովրդասէր պատրիարքի թախանձագին յորդորներին։

Գո՛հ էին նոյն ջոջերը և նրանց հետ ամեն կարգի շահագործող „կուշտերը“ 80-ական և 90-ական թուականներին, երբ նրանք ցինիկօրէն մերժեցին հայ ըմբոստ երիտասարդութեան մեկնած ձեռքը, լքեցին այդ երիտասարդութիւնը բախտի կամքին և ապա անխռով, անկարեկիր հանդիսատես եղան ժողովրդական զուլումներին, նետելով պատասխանատուութիւնը ոչ թէ իրենց դաւաճան անտարբերութեան, այլ նոյն ըմբոստ, յօշոտուած ու անձնազոհ տարրերի վրայ, որոնք չէին կարող հանգիստ դիտել մի ժողովրդի աստիճանական բնաջնջումը։

Գո՛հ էին և գաւառական հայ տուզերն ու աղաները որ յեղափոխութեան շրջանի մէջ, ժողովրդածին ըմբոստների օրհասական կռուի ընթացքում, միացած կառավարական գործակալների հետ որսախուճապ էին կազմակերպում յեղափոխական գործիչների դէմ... Ո՞վ չի յիշում նրանց քստմնելի սխրագործութիւնները Վանում, Մուշում, Հայաստանի գրեթէ բոլոր անկիւններում... ժողովրդի և նրա հետ տանջուող ու նահատակուող անձնուրացների դէմ։

Գո՛հ էին և այդ դժբախտ ժողովրդի *porte-parole*, ներկայացուցիչները—վեղարաւոր և անվեղար—որ անգամ Եւրոպայում գուժարուած հանդիսաւոր արէօպագի մէջ չէին կարող հանդուրժել հայոց հարցի արծարծումը և շտապում էին հեռագրով հասկացնել քաղաքակիրթ մարդկութեան, որ Եւրոպայի հայ գործիչները մանգա չունինՀոր թիւրքաց Հայաստանը գանգատ չունի, որ նա լաւագոյնն է բոլոր հնարաւոր աշխարհներից...

Ա՜հ, և ինչո՞ւ այս բոլորը արձանագրելու հարկի մէջ ենք, ինչո՞ւ հայ դժբախտ գրողին վիճակուած է իր դժուարին խուզարկումների մէջ այսքան տղմոտ իրողութիւններ քրքրել, այսքան խոչից ու խորխորատներից քայլել, ուր նա յաճախ ստիպուած է ամուր խցկել քիթ ու պռունկը, անտանելի գարշահոտներից խուսափելու համար...

Այո՛. մեր ունևոր և ազդեցիկ դասակարգերի անտարբերութիւնը ազգի է՛ն կենսական, հրամայական հոգսերի հանդէպ՝ ծանրացած է մեր սգաւոր պատմութեան վրայ, որպէս անջնջելի և անքաւելի մի արատ։ Գանգատնե՞ր ունի հայ ժողովուրդը ոչ միայն հայ բռնաւոր աղաների, պորտապարար կղերականների, տգրուկ վաշխառուների, մատնիչների, դաւաճանների և բոլոր ճշմարիտ ցեցերի դէմ, այլ և իր արդիւնաբերող ու առևտրական դասակարգի, որ տեղ է անցեալում և նորագոյն ժամանակներում այնքան շիտակ ու սրտցաւ հայրենասէր տիպարներ, ճշմարիտ ռահվիրաներ ազգային վերածնութեան։

Ի՞նչ են, սակայն, փոքրաթիւ անհատները հայկական Արպագոնների և Պլուշկինների այդ ահագին դասակարգի մէջ, որի գոյութեան քարէզի վրայ այնքան խիտ ու ծաւալուն են սուերները, որի սիրտը բնաւ երբէք ներդաշնակ, *à l'unisson* չբաբախեց կռուող ու մեռնող ժողովրդեան սրտի հետ.—մի դասակարգ՝ որ նորագոյն պատմութեան ամենավճռական վայրկեաններում, ամենացաւոտ ու մահացու դրւագների հանդէպ ցոյց տուեց անօրինակ, ազգագաւ անտարբերութիւն — թէ Թիւրքիայում, թէ Ռուսաստանում ու հայկական գաղութների մէջ։

Զուր չեն մեր գրեթէ բոլոր նորագոյն մատենագիրները այնքան ցասկոտ ոճերով խարանել հայ փողատէր դասակարգը։

Զուր չէր նաև մեր վշտատանջ, անմխիթար Քրիստաֆորը իր „Պատմական Զարիք“ խորագրով Դրօշակեան յօդուածաշարքի մէջ այնքան թոյն ու մաղձ թափում հայ դրամատէր դասակարգի այդ բացառիկ մտայնութեան վրայ.

Հայ բուրժուազիան, հաւատարիմ իր մշտական սկզբունքներին, մօդայի հարցի չափ անգամ կարևորութիւն չէր տալիս այնպիսի մի հսկայական խնդրի, ինչպէս էր հայկական դատը...

Ազգային համերաշխութիւնը օրինակելի էր Ցունական Ցեղափոխութեան բռնկումից յետոյ, ջնջել էին դասակարգերը համազգային քաղաքական դատի առջև, հարուստ ու աղքատ թևթևի տուած՝ կազմակերպում էին զինաւորումն ու դիմադրութիւնը։ Ցոյն հարուստներն էին մատակարարում կռուի պաշարը, ռազմամթերքը։ Եւ հրապարակ էր գալիս ամենախոշոր հարուստներից մինը, Լազար Կոնդուրիոտիպ՝ որ յայտնարարում էր.

Երեսուն տարուց ի վեր ես ամբարել եմ գանձեր—և բախտաւոր կը լինէի, եթէ նրանք այսօր ծառայէին իմ

երկրի ազատութեան... Ցուսով եմ, որ միւս հարուստներն ևս կունենան նոյն զգացումները. եթէ ոչ, դարձեալ մի՛ վհատէք, ես նաւատորմի ամբողջ ծախքը կը հոգամ մենակ...

Հապա մե՞զ մօտ... Թողնենք դարձեալ, որ խօսէ „Դաշնակցութեան“ ու Յեղափոխութեան մեծանուն քարոզիչը.

Վերջին տասնամեակում հայ-տաճկական յարաբերութիւնները կեանքի ու մահուան խնդիր ստեղծեցին մեզ համար, առաջ բերին մի տագնապալի, բացառիկ, անօրինակ վիճակ։ Ի՞նչ կարող է աւելի պարզ լինել քան այն, որ բացառիկ դրութիւնը պահանջում էր նաև բացառիկ եռանդ, բացառիկ գործունէութիւն, բացառիկ ճիգեր։ Բայց ա՞վ հետևեց այդ պահանջին՝ բացի ինտելիգենտ կամ զուտ ժողովրդական երիտասարդութեան համեմատաբար մի աննշան փոքրամասնութիւնից։

Ահա մի քանի գծեր։

Հազարաւոր անհատներ կարելի է գտնել հայերի մէջ, որոնցից իւրաքանչիւրը կարող էր ամբողջ նահանգներ զինել Տաճկահայաստանի մէջ։ Դուրս եկա՞ւ գոնէ մէկը։ 1895 թ.ին, պատմում է Մակկոլը („Սուլթանն և Պետութիւններ“) հայկական կոտորածների տպաւորութեան տակ.

„Մի անգլիացի, իր քաղաքական հմտամտութիւններով պ ա հ պ ա ն ո ղ ա կ ա ն, յայտարարեց, որ եթէ մեծ պետութիւնները, իրենց մեծազօր սկզբունքներով, արիութիւն չունենան սուլթանի ոճրագործ կատաղութիւնը սանձահարելու, ուրեմն Հայաստանում դիւանագիտութիւնը առնւազը կարող է փոխարինուել ի ն ք ն ա յ օ ժ ա ր ջ ա ն ք ե ր ո վ, ինչպէս այդ եղաւ յունական անկախութեան կռուի ժամանակ, և իր կողմից նա ա ռ ա ջարկեց 5000 ֆ. ստ. (25,000 ֆրանկ), որ զ է ն ք դ ն ւ ի անօգնական քրիստոնեաներին բաժանելու համար Տաճկաստանի այն տեղերում, որոնք մատչելի են ծովի կողմից“։

Իսկ մե՞նք, հայե՞ր... Բաւական է յիշել, որ ամենանախշոր գումարը, որ ամբողջ հայութեան մէջ մի հատիկ մարդ նւիրել է գէնքի գործին, այդ եղել է ընդամենը 25,000 ֆրանկի չափ մի ծախս... Բայց միաժամանակ քանի՞-քանի անձնւէր և փորձած գործիչներ, քանի՞-քանի գաւառներ կորան, հալւեցին միմիայն և միմիայն տարիների ընթացքում և ամենաբարելաջող հանգամանքներում զէ՞նք, զէ՞նք ու զէ՞նք սպասելու և վերջի վերջոյ չստանալու պատճառով...

Հազարաւոր նիւթապէս ապահով հայեր Հնդկաստան, Անգլիա, Ամերիկա, Աֆրիկա, ջհաննամ են գնում ով գիտէ ինչ գժոխային միջոցներով՝ իրենց ունեցածը աւելացնելու համար, բայց և ոչ մէկը չգտնւեց, որ այսպիսի մի անսովոր պատմական դժբախտութեան օրերում տեղիցը շարժւէր հասարակօգուտ ոևէ ձեռնարկի համար։ Եւ այս ոչ միայն հին սերունդի ներկայացուցիչների մէջ, այլ և երիտասարդ դրամատէրերի շրջանում, որոնք ունեն և՛ ուսում, և՛ զարգացում ու երբ սկսում են խօսել հասարակական գործունէութեան և ժողովրդի շահերին ծառայելու անհրաժեշտութեան վրայ, Գլադստոններ ու Լասալներ պէտք է դերեզմաններից կանչւեն նրանց հետ մրցելու համար...

Քաղաքակիրթ աշխարհում էլ ժողովուրդ չմնաց, որ այս կամ այն չափով արձագանք չտար հայկական թշւառ վիճակին։ 1894 թւականից սկսած՝ անգլիացիք, ֆրանսիացիք, հօլանդացիք, ամերիկացիք, զւիցերիացիք, նոյնիսկ գերմանացիք հայերին օգնութեան ձեռք մեկնեցին — երկրի մէջ հայ ժողովրդին գրամ, հաց և երկրագործական անասուններ բաժանելու կամ որբացած մանուկներին խնամելու և կրթութիւն տալու համար։ Իսկ ի՞նչ արին իրենք հայերը։ Մենք ունենք հազարաւոր հայեր, որոնցից իւրաքանչիւրը կարող էր նոյնքան մարդ կերակրել, նոյնքան որբանոցներ հիմնել, որքան այդ արւեց մի քանի ազգերից ժողովւած դրամներով. բայց դո՞ւրս եկաւ այդպիսի մէկը։ Ցաւոտի է, որ միակ մի Ջանշեան, ծագումով միայն հայ, իսկ կրթութեամբ կէս վրացի, կէս ռուս, իր անձնական աշխատանքով աւելին արեց հայ մանուկների համար, քան մեր „ազգասէր“ հարուստները։

Իրաւացի՞ է, հիմնաւոր է Քրիստաֆորի գանգատը։ Հայկական բուրժուազիան իր թշւառ, եպերելի հոգեբանութիւնը ցուցադրեց ոչ միայն յեղափոխական շարժման հանդէպ, ուր նա ունէր իր quasi-արգարացուցիչ „պատճառները“ — երկիւղ, անվստահութիւն յեղափոխական ուժերի նկատմամբ — այլ նա ցոյց տւեց իր բացարձակ անտարբերութիւնը նաև հայկական դատի հետ կենդանի առնչութիւն ունեցող զուտ լեգալ, օրինական ձեռնարկների վերաբերմամբ, որոնց անհրաժեշտութիւնը յաճախ են փաստաբանել նոյն բուրժուազիայի իդէոլոգները։

Շինծո՞ւ պատրւակներ էին թէ երկիւղը (թիւրը ու ռուս կառավարութիւնից) և թէ մանաւանդ „անվստահութիւնը“, թերահաւատութիւնը դէպի յեղափոխական ուժերը։ Անգամ խոշոր, հանդիսաւոր վայրկեաններում, երբ այդ ուժերը աջողում էին ստեղծել երկրի մէջ յեղափոխական կացութիւն, երբ նրանք կազմակերպում էին ժողովրդական դիմադրութիւն ամբողջ ամիսներով Զէյթունի և Սասնոյ լեռներում (1895—96 թ. և 1903—904 թ.), երբ հայկական խնդիրը լուրջ յուզմունք ու իրարանցումն էր յարուցանում գիւանագիտական աշխարհի մէջ, — անգամ այդ հերոսական վայրկեաններում հայ կրեսոսների դասակարգը մատնում էր իր կատարեալ անզգայութիւնը, ոչիսկ չէր անում բաց անել արիւնուռւող ժողովրդի առջև իր ամրակուռ սընդուկները։ Նա մնաց միշտ օտար ու խորթ այդ ժողովրդի ամենաինտիմ բաղձանքների և ամենասուրբ իդէալների համար...

Եւ այդպէս, ճակատագրի մի դժբախտ անօրինութեամբ սկզբից ի վեր — գնա՞ 70-ական թւականներից, երբ սաղմնաւորւում էր հայ քաղաքական դատը և երբ անցքերի հրամայական թելադրութեան տակ կատաղած կերպարանաւորւում ու բեմ էր գալիս, թէ մամուլի և թէ ազգային հասարակութիւնների մէջ, մարտական շունչով տոգորւած երիտասարդութիւնը — պ ա ռ ա կ տ ո ւ մ ը, խոր, անհաշտ հակամարտութիւնը, ցայտուն կերպով հրապարակ եկաւ ազգի երկու հնգաւածների միջև. մի կողմից՝ այդ մարտաշունչ գաղափարական փոքրամասնութիւնն էր — ձուլւած մեծ մասամբ բուն ժողովրդական տարրերից — որ ստանձնեց հայոց վերանորոգւող պատմութիւնից ամենածանր, ամենադժնդակ բեռը, որ ղեկեց՝ ուրախ ու սիրտդիմաց՝ հայ քաղաքական վերածնութեան դժնարին, պատասխանատու աշխատանքի մէջ, որ թափեց ճիգ ու եռանդ՝ ազատութեան գաղափարը արծարծելու և կեանքի մէջ մտցնելու համար, իսկ վայրկեանը հասնելուն պէս առաջնեռւեց à corps perdu գրնի յուզիչ ու հերոսա-

կան անձնուրացութեամբ դէպի փոթորկի ամենամռայլ խորշերը, դէպի շարժման ամենայորձանուտ հոսանքները։ Միւս կողմից՝ ազգի ՄԱՅԱՓԻՆ մեծամասնութիւնն էր, կազմուած բարեկեցիկ ու շնչախնդիր տարրերից, որ ոչինչ չզոհաբերելով հանդերձ, ստանձնեց ազգի գերագոյն խնամակալի պաշտօն, անողոք քննադատի, դատախազի պաշտօն, հալածեց շարունակ նոյն գործող փոքրամասնութիւնը իր գոռոզ և թունոտ արհամարհանքով, իր չինուած պատճառներով ու պատրակներով և հաստատեց նրան լքման ոգեյուսահատութեան այնպիսի անդունդների, որ ի վերջոյ՝ իր դէմ յարուցեց յեղափոխականի բուռն, անհարկու տենչութիւնը, նրա մոլեգին և վրիժառու շանթերը։

Ազգային չ՚եղաւ հայ նպատակագրական ճարժումը, այն իմաստով, ինչ իմաստով ըմբռնուել և մղուել է այն՝ ուրիշ, աւելի առաջադէմ երկրներում, Իտալիայում, Ունգարիայում, Լեհաստանում, Իրլանդիայում և Նոյնիսկ Ցուիսատանում,—հաւաքական ու համերաշխ ճիգերով, ազգի բոլոր դասակարգերի միահամուռ գործակցութեամբ։ Ժողովուրդն էր, հայ ծրնրուած ու գազազած ժողովուրդը, հայ աշխատող և տառապող ընդհանրութիւնը—գիւղացի, արհեստաւոր, պրոլետար, մանը, հասնում առևտրական—որ միացած իր հարազատ գիտնականութեան հետ՝ տարաւ իր մաշուած ուսերի վրայ շարժման լուծը։ Ժողովուրդն էր, որ տուեց և՛ գաղափարի քարոզիչներ և՛ յեղափոխութեան իդէոլոգներ և՛ առաջամարտիկ զինուորներ, հոգեկաւոր խմբապետներ։ Ժողովուրդն էր, որ լցրեց միշտ մենամարտերի շարքերը, որ սնուցեց և յեղափոխական գանձարանը իր դժուարին վաստակից ներբերեալ լումաներով։

Ժողովրդային—ոչ ազգային։ Եղերական անտիրեզ, չարաշուք հակադրութիւն։ Այդպէս է անշուշտ, եթէ մտածենք, թէ ինչքան լուրջ, պատկառելի ծաւալ կառնէր այդ ճարժումը, եթէ ցեղի բոլոր ուժերը համադրուէին ու օգտագործուէին սկզբից ի վեր նոյն ուղղութեամբ, նոյն էական և գերանհրաժեշտ նպատակով—կազմակերպել հաւաքական դիմադրութիւնը և նշանաձգել նրա միջոցով ազգային գոյութեան ու ազատագրման արդարակաց երաշխիքները։

Հայ մարտական կուսակցութիւնը իր 25-ամեայ գոյութեան ընթացքում շատ ճիգ թափեց՝ ուժերի այդ դաղձի համադրութիւնն իրագործելու։ Նա գիտէր, որ դա յաղթանակի պայմանն է, անպայման, անհրաժեշտագոյն պահանջը։ Նա գիտէր փորձից, պատմութիւնից, որ բարեկեցիկ դասակարգերը չինելով հանդերձ ընդհանրապէս պահպանողական, տարբերելով ժողովրդից և նրա ղեկավար արմատական մտաւորականութիւնից, իրենց մտածումով՝ բնազդներով ու իդեալներով, այնուամենայնիւ պատմական որոշ վայրկեաններում—ընդհանուր, աւերիչ, ազգակործան ոսոխի դիմաց—համերաշխութեան ձեռք են մեկնել այդ տարրերին և հզօրապէս սատար եղել նրանց ազատական թռիչքներին։ Նա գիտէր, որ դա նորմալ, բնականոն ընթացքն է պատմական էվոլիւսիոնի, որ այդ համերաշխ գործակցութեան մէջ չկայ ոչինչ անօրմալ ու վարկաբեկիչ կուսակցութեան արմատական դաւանանքի համար, ուստի և չէր վարանում շարունակաբար կոչ անելու հայ բուրժուազիայի աջակցութեան։ Ապարդիւն անցան բոլոր ճիգերը, ապարդիւն—բոլոր պերճախօս յորդորներն ու գործնական փորձերը։ Եւ այսօր—քանի հինգ տարուայ այդ յամառ ճիգերի ողբերգական փիասկոյի հանդէպ, այսօր, երբ տակաւին հին պառակտիչ որդը շարունակում է կրծել հայկական օրգանիզմը, երբ տակաւին յարատևում է խրամատը „հայ հասարակութեան“ և հայ մարտնչող տարրերի միջև, ջլատելով հաւաքական դիմադրութիւնը, լցնելով բոլոր զգայուն սրտերը կատաղութեամբ ու ցասումով, այսօր, երբ ժողովուրդը քանուհինգ տարուայ իր յուսահատ գալարումներից յետոյ՝ դեռ մնում է կղզիացած, մերկ ու անզէն բռնապետական մշտաճարակ հիդրայի դէմ, մինչդեռ նրա ճակատագրի գերագոյն խնամակալները, հայկական հասարակութիւնը, արհամարելով ինքնապաշտպանութիւնն ու այլ նման „ցնորքները“, ըստ նախնի սովորութեան կառչել է դիւանագիտական ֆետիշին և դարձեալ նրանից է ակնկալում փրկութիւնը։ Այսօր, ասում ենք, այդ „խրամատի“, անտիրեզի, ազգային այդ անդարմանելի պառակտման հանդէպ մեզ մնում է միայն ցաւել գէթ նրանով, որ այդ ցաւագին անտիրեզի մէջ*) մեր շարժման թուլութիւնը չէ միայն ցրուած, այլ և նրա ոյժը։

Քանի աւելի առաջ գնանք, այնքան աչքի շեշտելու է այդ ոյժը, որ հէնց շարժման ժողովրդական բնոյթի մէջ է, նրան ազնուացնող ու շնչաւորող դեմոկրատիկ սկզբունքի և դեմոկրատիկ կազմակերպութեան մէջ։ Եւ հայ բուրժուազիայի պատմական դաւաճանութիւնը մի աւելորդ խթան կը լինի հայ գործոն, գաղափարական մտաւորականութեան համար՝ կանգուն մնալու իր ժողովրդասէր ուղղութեան մէջ, գրկելու Աշխատանքի և նրա միլիոնաւոր բանակի դատը և տնօրինելու ազգային ճակատագիրը հմտաձայն միջազգային աշխատաւորութեան ու ընկերվարութեան նշանաբաններով։

Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

*) „Ժողովրդային շարժում—և ոչ ազգային“։

ԹԵՐԹՕՆ

ԻՄ ԲԱՆԴԸ

III

ԷՏԱՊ

—

Երկու շաբաթ վերջը՝ մի երեկոյ Մետեխի բերդից ինձ՝ ուրիշ մի քանի ընկերների հետ՝ նահանգական բանդ փոխադրեցին, յաջորդ առաւօտ՝ դէպի Ռուսաստանի խորքերը քշելու համար։ Պետերբուրգից եկած յատուկ կարգադրութեամբ հայ կալանաւորների դատը պիտի տեղի ունենար Կովկասից դուրս, հայ միջավայրից հազարաւոր վերստեր հեռու։

Արդէն իսպառ մթնել էր, երբ նահանգական բանդի դրանը կանգ առան մեզ տանող կառքերը։ Շալակեցինք մեր իրերը և ներս մտանք բակը։ Բանդապետը՝ ըստ երևոյթին մի բարեմիտ ծերունի, պատուիրեց մեզ համար մի յատուկ բանդասենեակ պատրաստել։

— Ձեզ կը կողոպտեն, գուցէ և սպանեն, ասաց նա բարեկամօրէն, եթէ ընդհանուր սենեակները տանեմ. այստեղ ամենքը ամենատոր տեսակի աւազակներ ու մարդասպաններ են, գիշերւայ ժամը 2-ին պէտք է պատրաստ լինիք։

Մեզ շտապով տարան դէպի մեր կամերան և դուռը փակեցին. քաղցած էինք ու ծարաւ. վերակացուն ասաց՝ թէ ոչինչ անել չի կարող, որովհետև դրսում՝ բանդարկեալների մէջ մեր դէմ մեծ զայրոյթ կայ, վտանգաւոր է դուռը բանալ։

— Զայրոյթն ինչո՞ւ, հարցրինք շարած։

— Օ՜, դուք չէք ճանաչում այստեղի բանտարկեալներին. նրանք սպասում էին ձեզ իրենց մօտ տեսնել, կողոպտելու համար. բայց բանդապետը ի դերև հանեց նրանց յոյսերը և նրանց դուրս հանեց այս սենեակից ձեզ տեղ անելու համար, այս պատճառով նրանք սաստիկ կատաղած են. առանձին սենեակը ձեզ բարիք է, գոհ եղէք և քաղցն ու ծարաւը տարէք լռութեամբ։ Նրանք դեռ դուրսն են, դրանը մի մօտեցէք։

Այս բոլորը նա ասաց դրան անցքից ու հեռացաւ։

Եւ բանդապետի „մեծ բարիքը“ վայելում էինք։ Սենեակը կատարեալ աղբանոց էր, գարշահոտ շան բուն. ճիճուներ, հազար ու մի միջատներ, մկներ եռում էին չորս կողմում. տեղ իսկ չկար նստելու. կապոցներս ցած դրինք, կծկուեցինք վրաները ու խորհում էինք լուռ։ Դրսում խօսք, աղմուկ կար։ Եւ յանկարծ դրան բացուածքից մի բռունցք ցցուեց և հետը մի անդուռն, կատաղի հայհոյանք։ Յետոյ երկրորդը, երրորդը... Հարևան բանտարկեալներն էին, որոնք մեր դէմ ատամներ էին կրճտում։ Բախտի անիրաւ հեգնութիւն. բանդից՝ բանդ, հալածական, քաղցած ու ծարաւ այս ախտաւոր որջի մէջ, մի մութ ու սարսափելի ապագայի առաջ։ այս բոլորը բաւական չէր, անարգւում էինք նաև այս բթամիտ, անգիտակից խուժանից, որի համար վաստակել, պայքարել, տանջուել էինք։ Մեր դուռը դղրդում էր նրանց ուժգին գրոհի դէմ, իւրաքանչիւրն աշխատում էր միւսին գերազանցել մեզ հասցրած անարգանքով. ցասումի խօսքերը հալած արճիճի գնդակների պէս զարկւում էին մեր պատերին. շարել էինք ու նայում էինք... ու յանկարծ մեր խեղճութիւնն ու անզօրութիւնը այս գերազանց, այս վայրագ անարգարութեան հանդէպ խելայեղօրէն քրքջաց. ծիծաղում էինք անմտօրէն, որովհետև միջատները շատ էին, գարշահոտութիւնը խեղդում էր մեզ. քաղցած էինք ու ծարաւ. ծիծաղում էինք, որովհետև այս ողբալի խուժանը եկել էր անարգելու, վիրաւորելու մեր կատարեալ անմեղութիւնն ու անզօրութիւնը։ Անիրաւութիւններ կան, որոնք իրենց պարամերժ ուժգնութեամբ, խախտում են զոհի հոգեկան հաւասարակշռութիւնը, մարդի ներքին էութեան լարը կտրւում է, արդար ցասումը դառնում է ծիծաղ, լացը՝ քրքիջ...

Եւ մենք քրքջում էինք...

Եւ երբ խուժանը լռեց ու հեռացաւ, մենք մնացինք դարձեալ մեր խոհերի հետ, անծայր լքումը յաջորդեց խելայեղ քրքջին ու գլուխներս ցած ընկաւ կրծքերիս...

***

Գիշերւայ ժամի երկուսն էր, երբ մեր դուռը բացուեց ճռնչալով ու մեզ հրաւիրեցին դուրս՝ դէպի էտապ. գոհ էինք, որ ազատւում ենք այդ հոտած սենեակից, որի համար կրել էինք այնպիսի անլուր, այնքան անիրաւ անարգանք։ Շալակեցինք մեր իրերը և դուրս փախանք։

Թանձր խաւարը իշխում էր բակում. մեզնից առաջ այլ բանտարկեալներ, ոմանք շղթաներով, ուրիշներն առանց շղթայի խիտ առ խիտ շարքերով կանգնած էին ընդարձակ բակի խորքում։ Ու նրանց շուրջը բազմաթիւ զինուորներ, որոնց հրացանների փողերի ու փայլուն սրերի ու կօճակների վրայ դողդողում էր պահապանների լապտերների աղօտ, գունատ լոյսը։ Հարևան բակից դեռ գալիս էին, գալիս էին նորանոր բանտարկեալներ։

Մի սպայ և մի գրագիր՝ տախտակէ ցածրիկ ծածկոցի տակ նստած՝ փոքրիկ սեղանի առաջ, քրքրում էին թղթերի ծալքերը, այն բանտարկեալների անունները, որոնք պիտի ճանապարհէին այս գիշեր։

Լռութիւն էր տիրում. լապտերաւոր պահապանները արագ արագ անցնում էին այս ու այն կողմ, պլպլան լոյսը վայրկենապէս ակօսում էր խաւարը լուսաւորելով մի կիսադէմք, մի գլուխ, մի թիկունք. աստղերը պաղ ցոլքերով թարթում էին վերից, և երկու բուեր նվվում

էին բանդի յետևի բլուրի վրայ, ուր կախաղան բարձրացածների կորած գերեզմաններն էին։ Դիշերային պաղ հովն էր փչում և մենք անքուն ժամերից յետոյ, ցրտից սրթսրթում էինք։ Զինուորները մեղմիւ շշնջում էին, կամ կատակում իրար հետ, բանտարկեալները հազում ու տնքում։ Երբեմն մի ոտք էր շարժւում, մի շղթայ շառաչում կամ ծեր տասնապետների չոր, խռպոտ ձայնն էր լսւում, ուղղւած այս կամ այն զինուորին, որ անուշադիր էր թողել առաջը կանգնած բանտարկեալին։

Սկսւեց անւանական կանչը, որ հնչւում էր ծածկոցի տակից. պատասխանում էր բանտարկեալների խմբից մէկնումէկը առաջանալով, իր պարկը շալակած։ Հարցնում էին անուն, հայրանուն, ազգանուն, տարիք պարապմունք, պատժի չափը, ո՞ւր է տարւում։ Կովկասեան բոլորը ցեղերը, բոլոր լեզուներն այստեղ իրենց ներկայացուցիչներն ունէին։ Սովորական յանցագործներ, գողեր, մարդասպաններ, մեծ ճամբաների աւազակներ, ինչպէս գաղափարական մարտնչողներ, խղճի, խօսքի ազատութեան ախոյեաններ, ամեն տարիքի, ամեն վիճակի անձեր մի արտառոց, խելագար արդարադատութեան քմահաճոյքով իրար էին խառնւած, նոյն դժնդակ վիճակի մէջ, եփւում էին վրէժխնդրութեան նոյն կաթսայի մէջ և մենք էլ ամենքի հետ։

Ռուսը մօտենում էր այն անյոյս հարբեցողի երազուն, երերուն ընթացքով, որի համար շղթայ ու ազատ կեանք, բանդ ու աշխարհ՝ միևնոյն է, ամեն ինչ ցնորք է, ու հարցերին պատասխանում էր այնպիսի ձայնով, որ ասես ուզում էր ասել. „ո՞ւր ուզէք կերթամ, որքան հեռու կամենաք կը բայլեմ, ինձ համար ամեն տեղ տիեզերք է և տիեզերքն էլ հոգուս մէջ է“...

Բիւրդը, վախլուկ այծեամի պէս անունը լսելիս, ցընցւում էր, սպասելով թէ ահա մէկը կը հարւածի. ապա վազում էր առաջ շշկլած, անհանգիստ չորս կողմը նայելով և միշտ սպասելով հարւածին։ Առաջարկւած հարցերին պատասխանում էր բարձրաձայն, գրեթէ ճչալով, բայց ասում էր միայն անուն ու հայրանուն, մնացած բոլոր հարցերի առաջ՝ աչքերը արագ արագ թարթում էր, մի ոտքից միւսի վրայ յենւում ու մնում լուռ, կզակը դողդողուն, ինչպէս լացի պատրաստւող երեխայ։

Վրացին մօտենում էր համարձակ, արհամարհոտ ու հաստատուն քայլւածքով։ Նոյնիսկ իր ոտքերի ծանր շղթաների շռինդը, այդ վէս ու կորովի քայլւածքով հնչում էր ներդաշնակ ու ընկճւած զոհի ըմբոստութիւնից։ Հարցերին պատասխանում էր ընդհատ, ընդհատ, չոր, գիտակից շեշտով, ուր հեգնախառն արհամարհանք կար միշտ։

Հայը առաջանում էր յամրաքայլ, յօնքերը քարշ, աչքերը խոժոռ ու մռայլ։ Նա պատասխանում էր հնազանդ ու անյոյզ, բայց մտածկոտ ու վշտոտ։ Նրա տւած պատասխանների մէջ նկատւում էր մի աւելորդ բառ չ՝ասելու մտահոգութիւնը ու հայեացքի մէջ մի բացարձակ անվստահութիւն դէպի դիմացինը. ըստ երևոյթին նրա համար ո՛չ մի թիւրիմացութիւն չկար, այս դաժան արկածն ընդունում էր, որպէս չարիք և կրում էր որպէս չարիք. նա գիտէր, որ այս չարիքին մասնակից են բոլորը—բանդապետ ու պահակ, սպայ ու զինուոր, ու գիտէր նաև, որ ինքն անզօր է ու պիտի կրի, որովհետև անզօր է։

Թուրքը առաջ էր գալիս ինքնամփոփ, դէմքին անմեղ զոհի, նահատակի արտայայտութիւն։ Թւում էր, թէ նա բնաւ չգիտէ, թէ ինչո՞ւ է այստեղ, թէ մի անիրաւ թիւրիմացութեան զոհ է, փոյթ չէ նոյնիսկ եթէ մի քանի մարդ է սպանել։ Հարցերին պատասխանում էր մեղմօրէն, դու խաղաղ, գթութիւն, կարեկցութիւն յարուցանելու շեշտով և պատրաստ աւելին ասելու, աւելին՝ քան պահանջւում է, բայց միշտ ինքզինքն արդարացնելու ձգտումով։

Կովկասեան լեռնականը ճկուն ու բարեձև, արծաթի հայեացքով ու միշտ կատաղի, գազազւած, առաջանում էր խիստ ու ցասկոտ շարժումներով. թւում էր, թէ նա ոտքերի տակ տրորում է այն օրէնքը, որ եկել էր իշխելու նրա հայրենի երկրի բարք ու սովորութիւնների վրայ, ուր սպանութիւնը՝ վրէժխնդիր արդարադատութեան մի ձև է, մեծ ճամբու թալանը՝ վաստակ, ըմբոստութիւնը կառավարական պաշտօնեաների դէմ „իգիտութիւն“։ Նա պատասխանում էր մռայլ, թաւ ձայնով, կոկորդի մէջ, ուր թշնամական քինոտ շեշտն էր եռում։

Եւ իւրաքանչիւր հարց ու պատասխանից յետոյ՝ սպան բարձրաձայն հրամայում էր՝

— Խուզարկել։

Եւ երկու ուժեղ, յաղթանդամ վերակացուներ վայրկենապէս գետին էին տապալում կալանաւորին, մերկացնում ոտները, բանդում կուրծքը, քրքրում գրպանները, զգեստի բոլոր ծալքերը, բոլոր կարերը, բոլոր խորշերը, ուր հնար էր թէկուզ մի ասեղ թագցնել։ Խուզարկութիւնը վերջանում էր և երկու սւինաւոր զինուորներ առաջնորդում էին կալանաւորներին, կանգնեցնում կազմւող շարքերում և ձեռքի շղթայով նրան կապում էին իր հարևանին։

Լուսաբաց էր. արդէն արևելքը մեղմիւ շառագունում էր. շրջակայքի այգիների ծառերն ու բլուրները կամացուկ դուրս էին սողում խաւարից ու ծրագրւում աւելի և աւելի յստակօրէն։ Դեռ կանչը շարունակւում էր, դեռ էտապի շարքերը թանձրանում էին հա՛ թանձրանում։ Ես և իմ ընկերները վերջիններն էինք. երեք ժամ ամբողջ դիտում էինք ցաւագին տեսարանը՝ սպասելով մեր հերթին։ Առաւօտեան ժամի հինգն էր, երբ մենք էլ խուզարկւելուց յետոյ՝ բռնեցինք վերջին շարքը։

Էտապը կազմ ու պատրաստ էր. հարիւր յիսուն

բանտարկեալ շրջապատուած հնդիկ զինուորներով։ Ընդ-թայակիրները սակաւ բացառութեամբ բռնում էին առաջին շարքերը, միաբանի գուս կանգնելով դատապարտուածներ, նստեցին մեր իրերը տանող սայլակի վրայ։ Սպան հրամայեց բանդիներին, մեծ դաբաստը հանդիսաւորապէս բացուեց և Դարդկային ժողովրդածը զարժուեց առաջնորդ ու շապաշինով։

— Ծոծրակներին, յառա՛ջ, հրամայեց սպան։

— Ծոծրակներին, յառա՛ջ, կրկնեցին զինուորները, քանդագանելով իրարանցիւրիս հայեացքն ուղղել առաջից գնացողի ծոծրակին և այդպէս քայլել։

— Շտապե՛ր, հրամայեց սպան։

Ու այն ժամանակ կատաղութեան մի հոգմ զարկեց զինուորների վրայ։ Մեզ հրհրում, քշում, մղում էին առուակներից, դար ու փոսերից, քար ու խիճերի վրայից։ Ցիսուն շղթաների շռինդը, բազմաթիւ ոտների գոփիւնը, զինուորների կանչուկ ու հայհոյանքները և մանաւանդ՝ բարձրացած թանձր փոշին՝ շուտով մեզ ճամբան դժուրք դարձրին։ Մենք գնում էինք հև ի հև, անքալով, իրար հրհրելով, փոշու ամպերի մէջ ոտից գլուխ սպիտակած, տանջուած ու ցասկոտ, որպէս հալածական հոգիներ։ Մեր ճակատներից քրտինքն էր ծորում կայլակ կայլակ ու խառնուում փոշու հետ ցեխ կազմած երեսներիս, և մեր կրծքերից անէծքի խուլ մռմռոցներ էր բարձրանում։ Անքնութիւնից, քաղցից ու յոգնածութիւնից ուժասպառ, մենք դժուարութեամբ էինք քարշ տալիս մեր ծանրլուծ ծնկները։ Ուրիշներն իրենց շղթաները, ամենքն այս Խնդրալ, անխորհուրդ անիրաւութեան դաժան բեռը։ բայց պէտք էր շտապել, վազել առաջ անցնել զինուորների հայհոյանքներից ու բիրտ շարժումներից ազատ մնալու համար։ Երբ առաջին շարքերը յանկարծ դէմ էին առնում որևէ թմբի, փոսի, խրամատի ու թափով ընկրկում, յետևի շարքերը գալիս ուժգնօրէն զարկուում էին նրանց, և կրծքերի ու թիկունքների բազխումի խուլ թնդիւնը, մարմինների կոպկոպումը շղթաների այլանդակ շառաչին միացած՝ բարձրանում, տարածուում էին ու խուլ արձագանքներով կրկնուում հեռաւոր այգիներիս բլուրների մէջ։

— Ծոծրակի՛ն, ճչաց զինուորը հրացանի կոթով հրելով իմ հարևան ծերուկ թիւրքին, որ անընդհատ վազում էր, աշխատելով միւսներից յետ չմնալ։

Թիւրքը չհասկացաւ ռուսերէն։

— Ի՞նչ է ասում, գլխիդ մատաղ, դարձանի՛ դէպի ինձ։

— Ասում է, նայի՛ր դիմացինիդ ծոծրակին։

— Ապա այս անիծուած ճամբան ինչպէս բարիւմ, ախր կ'ընկնեմ, եթէ առաջս չնայեմ։

— Զգիտեմ, ասացի։

— Լսուած բէլա տայ քեզ, ուռո՛ւս, հեծեծաց թիւրքը։ Հանքանք քաղաք։

Փոշուց շղթանքրիս քրտինքիս, սինների այդ թանձր ու մռայլ զանգուածը այժմ պղտոր հեղեղի պէս ճառագում էր փողոցներով աւելի ու աւելի արագ, ոտների հանգնելով, անմիջապ անպանական ու խելագար մի վազք, որ այլ ևս պատճառն ու նպատակը մոռներ էին զոհերի և վարիչների գլուխներից և մոլգրիկ իրար հրհրելով, իմալ կոխկրտելով տարում էին ջիմանցով ո՛ւրբինչո՞ գիտեին միայնաւոր հայհոյանքների տարափը կայ և հրացանների ապառնապիկ քշրձրացած կոթերը։

Փողոցները դեռ դատարկ էին։ մեր հառաչանքն ու մեր անէծքը շղթաների շռինդի հետ բարձրանում, գալարուում էին օդի մէջ մեռնող օձի պէս ու զարկուում էին պատերին։ Հեծեծում լուսամուտների տակ, շանգռում փակ դռներն ու անցնում։ Երբեմն այս կամ այն լուսամուտի վարագոյրը յետ էր քաշուում, խռոված, քնատ թաթախ մի դէմք ծրագրուում էր ապակու վրայ, կանացի մի գլուխ էր երևում վախկոտ ու բերանաբաց, ապա շտապով ծածկուում էին։ անշուշտ սարսափած տանջանքի ու անիրաւութեան այս զարհուրելի թափորից։

Իմ առջևից գնում էր մի քարձրահասակ լեռնական, վոտ, քամած, ուժասպառ։ Դա տեսնում էի նրան պարանոցի դուրս ցցուած ջիղերը, երեսի ծամուող մկանները, կորացած թիկունքը, ն հիւանդ էր։ փոշուց ոտ վազքից տեղուում էր շոր ո նդհատ ընդհատ հազում, և անասելի ճիգեր էր գործ դնում քաջ տալու ոտների ծանր գշթանները։ Ցետ էր մնում շարունակ, կապած դասակը քաշ էր ընկնում հարևանի բազուկից, այդ ժամանակ լսում էր զինուորի խրոխտ կոչը։ բարձրանում էր հրացանի կոթը և հիւանդի ցաւագին երերումներով, կրկին նետուում էր առաջ ինչպէս կարող էր։ Մեր նզովուած ճամբան վերջ չունէր, դժբախտը գերմարդկային ճիգեր էր գործ դնում շարքից յետ չմնալու համար։ բայց անիրաւ շղթաները շատ էին ծանր, շատ էին կրծոտում չորացած, անոյժ ոտները ու քաշում, յետ էին պահում նրան։ Անուամենայնիւ վազում էր, վազում, մերթ յետ էր ընկնում դիպչում յետևից եկողի կրծքին, մերթ թափով նետուում էր առաջ և զարկուում առջևինի թիկունքին, երերուում էր դէպ ու փոսերի մէջ, յենում էր հարևանին՝ չ'ընկնելու համար, ու մեկ էլ յանկարծ.... ընկաւ երեսի վրայ, մնաց անշարժ։ Շարքերը վայրկենապէս իրարանցան, հրացանները հորիզոնական դիրք պրան, սինները դէպի մեզ լսեց անդուռն հայհոյանք ու կատաղի ոռնոցը զինուորների թափորը կանգ առաւ։

— Ոտքի՛, ճչացին շոր կողմից զինուորները, ի զուր։

Ու ընկած էր շղթայակիր հիւանդը, երեսը թաղած ճամբի թանձր փոշու մէջ, բերանից ժայթքում էր սուգ արիւնը նոդկալի շաղախ կազմելով հողի հետ, ընկած էր օրհասական, անոյժ դողդողում էր, ծնցուում էր, գետինը չանգնելով իր ոսկրացած ձեռներով։ Քանի լուութիւն իջաւ ճնշեց, խոլտակեց մեզ և մեր դահիճներն իսկ

փոշուց շղթանքրիս քրտինքիս, սինների այդ թանձր ու մռայլ զանգուածը այժմ պղտոր հեղեղի պէս ճառագում էր փողոցներով աւելի ու աւելի արագ, ոտների հանգնելով, անմիջապ անպանական ու խելագար մի վազք, որ այլ ևս պատճառն ու նպատակը մոռներ էին զոհերի և վարիչների գլուխներից և մոլգրիկ իրար հրհրելով, իմալ կոխկրտելով տարում էին ջիմանցով ո՛ւրբինչո՞ գիտեին միայնաւոր հայհոյանքների տարափը կայ և հրացանների ապառնապիկ քշրձրացած կոթերը։

Փողոցները դեռ դատարկ էին։ մեր հառաչանքն ու մեր անէծքը շղթաների շռինդի հետ բարձրանում, գալարուում էին օդի մէջ մեռնող օձի պէս ու զարկուում էին պատերին։ Հեծեծում լուսամուտների տակ, շանգռում փակ դռներն ու անցնում։ Երբեմն այս կամ այն լուսամուտի վարագոյրը յետ էր քաշուում, խռոված, քնատ թաթախ մի դէմք ծրագրուում էր ապակու վրայ, կանացի մի գլուխ էր երևում վախկոտ ու բերանաբաց, ապա շտապով ծածկուում էին։ անշուշտ սարսափած տանջանքի ու անիրաւութեան այս զարհուրելի թափորից։

Իմ առջևից գնում էր մի քարձրահասակ լեռնական, վոտ, քամած, ուժասպառ։ Դա տեսնում էի նրան պարանոցի դուրս ցցուած ջիղերը, երեսի ծամուող մկանները, կորացած թիկունքը, ն հիւանդ էր։ փոշուց ոտ վազքից տեղուում էր շոր ո նդհատ ընդհատ հազում, և անասելի ճիգեր էր գործ դնում քաջ տալու ոտների ծանր գշթանները։ Ցետ էր մնում շարունակ, կապած դասակը քաշ էր ընկնում հարևանի բազուկից, այդ ժամանակ լսում էր զինուորի խրոխտ կոչը։ բարձրանում էր հրացանի կոթը և հիւանդի ցաւագին երերումներով, կրկին նետուում էր առաջ ինչպէս կարող էր։ Մեր նզովուած ճամբան վերջ չունէր, դժբախտը գերմարդկային ճիգեր էր գործ դնում շարքից յետ չմնալու համար։ բայց անիրաւ շղթաները շատ էին ծանր, շատ էին կրծոտում չորացած, անոյժ ոտները ու քաշում, յետ էին պահում նրան։ Անուամենայնիւ վազում էր, վազում, մերթ յետ էր ընկնում դիպչում յետևից եկողի կրծքին, մերթ թափով նետուում էր առաջ և զարկուում առջևինի թիկունքին, երերուում էր դէպ ու փոսերի մէջ, յենում էր հարևանին՝ չ'ընկնելու համար, ու մեկ էլ յանկարծ.... ընկաւ երեսի վրայ, մնաց անշարժ։ Շարքերը վայրկենապէս իրարանցան, հրացանները հորիզոնական դիրք պրան, սինները դէպի մեզ լսեց անդուռն հայհոյանք ու կատաղի ոռնոցը զինուորների թափորը կանգ առաւ։

— Ոտքի՛, ճչացին շոր կողմից զինուորները, ի զուր։

Ու ընկած էր շղթայակիր հիւանդը, երեսը թաղած ճամբի թանձր փոշու մէջ, բերանից ժայթքում էր սուգ արիւնը նոդկալի շաղախ կազմելով հողի հետ, ընկած էր օրհասական, անոյժ դողդողում էր, ծնցուում էր, գետինը չանգնելով իր ոսկրացած ձեռներով։ Քանի լուութիւն իջաւ ճնշեց, խոլտակեց մեզ և մեր դահիճներն իսկ

սասանեցրեց։ Մօտեցան, բարձրացրին, երկու զինուոր մտան թևերի տակ, հասցրին սայլակիր, որ մեզ հետևում էր, նետեցին պարկերի վրայ անշունչ դիակի պէս և ցաւի համր թափորը կրկին շարժուեց առաջ, այս անգամ դանդաղ, յամրաքայլ, որպէս յուղարկաւորների բազմութիւն։ Դժբախտ շղթայակիրի արկածը մեր վարիչների բուռ ուղեղների ու կարծր սրտերի վրայ ընկաւ ինչպէս սթափեցուցիչ մի ցոլք. մեզ այլ ևս չէին քշում, չէին հայհոյում։

Հասանք երկաթուղային կայարանը։

Եօթ-ութ վերստ տարածութիւնը անցել էինք ժամ ու կիսում մեր շղթաներով, յոգնածութեամբ ու տանջանքով։ Մինչև գնացքի ժամը, պէտք էր սպասէինք դարձեալ երկու ժամ. ինչո՞ւ համար էր ուրեմն այդ վայրենի, այդ յիմարական վազքը...

Մեծ անիրաւութիւնը միշտ նաև մեծ բթամտութիւն է..

**

Կալանաւորների գնա՞ցքը...

Ցածրիկ նեղլիկ վագոններ, որոնց առաստաղը մարդու գլխին է իջնում. փոքրիկ լուսամուտներ երկաթէ վանդակներով պատած՝ որպէս գազաններ փոխադրող կառքերը և բոլորը կեղտ ու միջատներով լեցուն։

Եւ հարիւր յիսուն կալանաւորներ երկու կարգ զինուորների շարքերի միջից անցան, ներս թափեցին այս դագաղանման վագոնները։ Ընկան, ով ուր կարող էր, ինչպէս կարող էր տեղաւորուեց։ Զինուորները կալանաւորների ձեռնակապանները հանելուց յետոյ, հրացանները կազմ ու պատրաստ՝ շարուեցին դռների ու լուսամուտների առաջ։

Անքուն գիշերից ու լուսաբացի այն խելագար վազքից յետոյ, այս վիճակը հանգստի հմայքն ունէր. կարելի էր նստել, ծնկները ծալել, կամ ձգել, կարելի էր նայել հեռուն, խորհել, թէկուզ քաղցած ու պահակների անթարթ հայեացքի առաջ։ Եւ կալանաւորներից ոմանք անմիջապէս քնեցին նստած տեղում գլուխները կրծքերին քաշ և իրանները երկուտակ ծալուած։ Ուրիշները դուլս քաշեցին պարկերից մի-մի կտոր չոր հաց և սկսեցին կրծոտել։ Հիւանդ լեռնականը ձգուեց մի դարեկի վրայ կիսախուփ աչքերը ցածրիկ առաստաղին յառած, տենդից չորացած շրթունքները կրծոտելով, մեզմիւ նվվում էր։

Եւ դո՜ւրսը... մայիսեան արև, մայիսեան դաշտեր, որոնց միջից որոտալով անցնում էր գնացքը անյայտ տանջանքների, լուռ ցաւերի, համր կսկիծների իր ծանր բեռով։ Յետոյ կայարանները, ուր միշտ ամբոխներն են եռում, գունատ ու գռեհիկ իրենց սովորական հրհրոցով, անց ու դարձով, հևքոտ ու եսասէր շարժումներով, միշտ պատրաստ տրորելու, ոտնահարելու, ճխլելու մէկին, վայրկեան առաջ նպատակին հասնելու համար։ Ուրիշները բերանաբաց, հեղգօրէն անգործ, անցուդարձի, ժխորի սիրահար հանգիստներ, որոնց երազուն ունայնասիրութիւնը չգիտես ինչ մի արտառոց հրապոյր է գտնում մարդկային մեծ համախմբումների, վայրագ խուժանային ալէկոծումների, անցուդարձի, պատկերների այս յարափոփոխ շարքի մէջ։ Այս խուռն բազմութիւնից մէկն ու մէկը ցոյց էր տալիս հարևանին երկաթապատ լուսամուտներով վագոնները, ներսի ֆիսախաւարի գունատ ու մռայլ դէմքերը։ Ոմանք առաջանում էին աւելի մօտ այն ախտաւոր հետաքրքրութեամբ, որ մղում է մարդուն իր նմանի տանջանքը շատ մօտից տեսնելու. ուրիշները՝ անկարեկիր ու պաղ հայեացքով դիտում էին ու անցնում, և շատերի համար զարհուրելի էին բանդային այս բոլոր սարք ու կազմը, այս հարիւր յիսուն հոգու բազմութիւնը սպանդանոց տարուող անասունների պէս իրար վրայ ղմած գարշահոտ վագոններում։

Եւ յետոյ՝ ի՞նչ է կարեկցութիւնը այն ուժեղ, զգայացունց հաճոյքի հանդէպ, որ ի տես իր նմանի տանջանքին հմակում է բուռ, անասնական էութիւնները։ Կալանաւորների, թիապարների, մահապարների թափորները, որ գիտակցօրէն փռում են հրապարակներում ու փողոցներում վայրագ կառավարութիւնները, ուրիշ նպատակ չունին, բայց եթէ անասնացնել ամբոխները, նրանց ամենասաստ, վատթար բնազդները շարժել։

Ա՜հ, բռնութեամբ մնած, մտրակի ու կրունկի տակ ճզմուած ամբոխը, անգիտակից ու անզգայ, որպէս անասուն, միշտ պատուանդանն է բոլոր բռնութիւնների, բոլոր անիրաւութիւնների։

Եւ մեր գնացքը անցնում էր այս ամբոխների աչքերի առաջից ու վերստին թաղուում մայիսեան արևի, մայիսեան դաշտերի մէջ. թարմ ու մատաղ բնութիւնը ինչպէս միշտ՝ փարթամօրէն փռել էր ամեն կողմ իր գեղն ու բուրմունքը։ Դարձեալ թռչունները ճախրում էին ջինջ եթերում, կապուտակ լեռները հևում մշուշի մէջ, հօտաղ ու հօտեր թափառում կանաչաւէտ մարգերում և ծառ ու ծաղիկ, շող ու բոյր համատարած, ծովածաւալ ծփծփում էին հորիզոնից հորիզոն. ու մեր շարժական դժոխքը ոռնոցով ու դղրդիւնով անցնում էր այս հրաշագեղ բնութեան միջով, որ ասես մեր ցաւի կսկիծն ու մեր հոգիներում եռացող, պրկուած ըմբոստութիւնը մարակելու համար էր այսօր այդքան գեղանի, այդքան հրապուրիչ։

Ոչ, անկարելի է զգալ այդ հակադրութեան յարուցած սուր կսկիծը, առանց անձամբ ճաշակելու նրա բոլոր դառնութիւնը։ Դիտում ես լայնարձակ հարուստ բնութիւնը, պայծառ արևն ու իր շողերը, լոյսերով ողողուած այդ կանաչ բլուրները, այդ անծայր հեռուն, որ ազատ, արձակ կեանքի խորհրդանշանն է. և այդ

բոլորը բեզ թուում է այնպէս խորթ, այնպէս անմատչելի, երազուն։ Թուում է, թէ նեռուած ես մի ցուրտ, դաժան ու մեռած ասպղի վրայ և դատապարտուած ես դիտելու այս խուսափող պատկերները մի ցնորական աշխարհի, որ այնքան հրապուրիչ է, այնպէս մօտ, բայց անհասանելի, յաւիտեան անմատչելի։ Կեանքի ծարաւը՝ կիզիչ, անյաղթելի եռում է կրծքիդ տակ, ազատութեան բուռն տենչը հոգիդ է փոթորկում, խենթ ու ցասկոտ յոյզեր, ատելութեան, վրէժխնդրութեան, աւերածի բուռն զգացմունքներ փոխ առ փոխ երակներիդ արիւնն են հրդեհում, ուզում ես կախուել լուսամուտի վանդակապատից, ատամներով կրծոտել ժանգոտ երկաթները, ճչալ երկնքի ճակտին մի սրբապիղծ, մի խելագար խօսք և թքել աշխարհի երեսին...

Գնացքը ոռնալով ու շաչելով անցնում էր մայիսեան դաշտերով, մայիսեան շողերի միջից. հմայիչ պատկերները խուսափում էին իրար յետևից։ Կեանքի ծով կարօտը համակեց ամենքին, և այդ կարօտն էր, որ նախ մեզմ, ապա աւելի և աւելի յուզիչ շեշտերով թանձրացաւ ու բարձրացաւ մի քանի տասնեակ կրծքերից։

Կալանաւորները երգում էին... հակառակ զինուորների սաստ ու հրամանին։ Քնածները զարթեցին ընդոստ, հիւանդներն իսկ ցնցուեցին, և հայ ու վրացի, ռուս ու լեռնական, քիւրդ ու թիւրք, փոխ առ փոխ տարբեր լեզուներով, տարբեր շեշտերով երգում էին հայրենի լեռների, հայրենի դաշտերի կարօտը, կեանքի, ազատութեան անյաղթ, հզօր երգը։ Եւ այդ երգը, մերթ խրոխտ ու հպարտ, մերթ ողբաձայն ու գալարուն, խեղդուած հեկեկանքով դուրս էր սողում նեղլիկ լուսամուտներից, փարում էր քամիներին ու փուում ազատ, արձակ դաշտերի վրայ։

Եւ գնացքն անցնում էր մայիսեան դաշտերով, մայիսեան շողերով ողողուած։

ՏԱՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

—

Մուշ, մայիս

Մեր բնակավայրը հետզհետէ կը վերադառնայ իր հին, արիւնոտ օրերուն... Մթնոլորտը դարձեալ մթագնած է, բռնութիւնները ճնշող են։ Եթէ հայ ժողովուրդը հին և աւելի մռայլ օրերուն ընդունակ եղաւ կռուելու իր գոյութեան և տարրական ազատութեան համար, այսօր աւելի յանդուգն և աւելի ուժեղ պիտի պոռթկայ հայ ինքնապաշպանութիւնը, որովհետև... այս կացութիւնը համբերութեամբ տանելը արդէն անարգանք մըն է։

Դէպքերը այնքան սովորական են և այնքան յաճախ կը կրկնուին, որ մեր ջիղերը բթացած են, անկարող խոր կերպով զգածուելու։

Պէկերու և Շէյխերու գաղտնի ժողովները կը շարունակուին։ Պարզ խօսակցութեան մէջ իսկ քիւրդերը ետ չեն մնար ընելու իրենց սպառնալիքները հայերու հասցէին։

Հարկահաւաքներ և իրենց ձիերը ձրի կը կերակրուին գիւղերու մէջ. ծեծը սովորական երևոյթ է դարձեր։ Հաւ և ոչխար մորթել առանց դրամի, կաշառք առնել յիւղացիներէն և այլն։ Այդ տեսակի խնդիրներու մասին կառավարութիւն գլուխ ալ չունի մտիկ ընելու։

Մշոյ քաղաքի մէջ թիւրք աղաներ հետզհետէ դաժան կը դառնան։ Անցեալները թիւրք մը հայ մսագործի մը կը ծեծէ, անոր համար որ եղած լաւ միսեր ծախեր է և գէշ միսերը թողեր է, իբր թէ հայը առանց իր հրամանին իրաւունք չունի առևտուր ընելու։

Ուրիշ թիւրք աղա մը, շուկայի մէջ կը հայհոյէ հայերուն և թիւրքերը կը հրաւիրէ ջարդի, որովհետև եկած ամանսը թիւրքերու պատերազմական դիրքի մասին նպաստաւոր չի խօսիր։ Հայ մը, գիւղէն բերած իր փայտերը ծախելու համար համարձակած էր թիւրքի ներկայութեան հայու մը հետ ալ սակարկել։ Թիւրքը գոգուած, ոստիկանի ներկայութեան, կը ծեծէ հայը... Կառավարութեան պաշտօնեան չի միջամտիր։

Այս ձմեռ ձիւն շատ եկած էր։ Գիւղացիները կենդանիներու համար սնունդ չունէին։ 3 ղրշ. գնած խոտը 20 ղրշ. հազիւ գտնէին։ Այնպէս որ գիւղացին իր գոմէշի և եզան գնով դարմանն պարտաւոր էր գնել, որպէս զի գարնան կրնար վարուցանք ընել։ Բնութեան աղէտը բաւական չէր հայ գիւղացիին, շրջակայ պէկեր և աղաներ իրենց տաւարները և ոչխարները զանազան հայ գիւղերու վրայ բաժնած են պահելու համար։ Հայ գիւղացին իր մէկ հատիկ լծկան եզը չի կրնար պահել, ո՞ւր մնաց—ձրի՝ քիւրդ պէկին տաւար ու ոչխարը պահել... Դարձեալ տոկոսով դրամ առնել, սալաֆ ընել ու պէկին կենդանիները պահել... Պատկերը բնաւ հին ռէժիմի օրերէն չի տարբերիր։

Մէկ քանի հայ գիւղեր արդէն կը պատրաստին դուրս շպրտելու քիւրդերու և թիւրքերու կենդանիները։ Հետևանքներու մասին մտածել հնար չէ... Ցարաբերութիւնները սաստիկ լարուած են, հայեր, թիւրքեր և քիւրդեր դէմ դէմի... Անխուսափելի են ընդհարումներ, սպանութիւններ և թալան...

Կառավարութիւնը՝ միշտ ենթարկուած էշրաֆներուն և պէկերուն՝ բնաւ չի մտածեր առաջն առնելու նման դէպքերուն, որոնք մօտ ապագային կրնան արիւնոտ կերպարանք ստանալ։ Այդ պարագաներուն՝ յուսահատ հայը, աւա՜ղ, իր բահով և մանգաղով է, որ պիտի դիմէ ինքնապաշտպանութեան՝ սպառազինուած քիւրդի ու թիւրքի դէմ...

Կ.

Կոփ, մայիս 28

Մինչդեռ ամենաբարձր պաշտօնեայից սկսած մինչև վերջին զաբթիան, իրենց հետ ունենալով նաև էշրաֆական դասը, կը խօսին „Թոփրաք գարտաշիրզ“ անունից, այնքա՜ն քաղցր, այնքա՜ն հմայիչ... անդին թէ գործով և թէ շարժ ու ձևերով, բոլորովին հակառակը կ'ընեն, հարկաւ միմիայն հայերուս հանդէպ...

Քիչ առաջ, տեղւոյս թիւրք վաճառականներէն մին, Էմին Էֆէնտի (որը հայերու հանդէպ, հայերն էլ իր հանդէպ միմիայն յարգանք են տածել) ապառիկներ գանձելու համար շրջան կ'ելնի։ Գործը լմնցնելէն վերջ, երբ գանձած գումարներով և երկու ձի իր հետ միս մինակ կը վերադառնայ դէպի տուն, Համզաշէյխ և Ղարաղըլ հայ գիւղերի սահմաններուն, անայտ չարագործներից թէ կըսպանուի և թէ կը կողոպտուի։

Որովհետև սպանուողը ինչ որ հաշուի համար ընդհարում էր ունեցել քիւրդ աղաւաթից յայտնի Ֆէհիմին հետ, որ ծեծկուել էին փողոցին մէջ և որ գլխաւորն է, հանգուցեալը այցելած էր նաև անոր գիւղը Մօլամարֆան ապառիկ գանձելու, այդ պարագաները ի նկատի ունենալով, անոր եղբայրը և պարագաները սպանման լուրը առնելուն պէս, Ֆէհիմին վերագրեցին որպէս վրէժխնդրութիւն։ Եւ որովհետև վերջինս կը գտնուէր Կոփում, անմիջապէս ձերբակալել ուին։

Ֆէհիմը, իր գաղանային հակումներով, վաղուց յայտնի է թէ անցեալում և թէ ներկայիս — նա իր ազդեցութեամբ քիւրդ աղաւաթի մէջ, առաջին տեղը գրաւողներից է. ուստի բանտարկութեան լուրը առնելուն պէս, իր ասպիճանի աղաներից Հիւսէին և մի քանի ուրիշներ կըշտապեն հոս և կտրուկ պահանջ կը դնեն կառավարեան.—կամ Ֆէհիմին արձակում, կամ թէ չէ... իրենք կը յարձակին։ Բացի այդ, մութ անկիւններում տեղի ունեցած անց ու դարձերից յետոյ, սպանուածի ազգականներն էլ կը փոխեն իրենց համոզումը և կը պոռան, թէ „Հայե՜րն են սպաններ Մէհմետ Էմինին։“... Ու կըսկսին սպառնալիքներ տեղալ հայերու հասցէին։ Գործը այնտեղ հասաւ, որ մի քանի օր Կոփայ 500 տուն հայութիւնը կծկուած մնաց իր տների մէջ ահ ու դողի տակ։

Ի՞նչ ասել կուզէ, Ֆէհիմը, ընդամենը մէկ օր մնալով արգելափակ, ազատ արձակուեց... որից յետոյ սկսուեցաւ հալածանքն ու խստութիւնը Համզաշէյխ գիւղի հայութեան դէմ, ծեծ, ջարդ և սոիպում — „կամ սպանութիւնը ձեր վրայ վերցրէք, կամ թէ չէ ոճրագործը ցոյց տուէք“... Գիւղացիներից մին ձերբակալուած և հոս բերուած բանտին մէջ արիւնլուայ ծեծի ու ջարդի տակ. կը պահանջուի—կամ սպանութիւնը իր վրայ առնել, կամ սպանողներին ցոյց տալ։ Ցաղն, որպէս զի ինքզինքը ազատէ այդ տանջանքներէն, կըսկսի անունների շարանը իրենց գիւղից, կը մատնէ անոնց, որոնց հետ թերևս անհատական գձուձ հաշիւներ էլ ունեցած լինի... Եւ կառավարութիւնը մեծ գիւտ արածի պէս կը փութայ հոն, կը խուզարկէ խստօրէն և մի քանի անպէտք զէնքեր գտած, յիշեալ անձերն էլ ձերբակալած, յաղթականօրէն կը բերէ ու կը լեցնէ բանտը..

„Թոփրաք-գարտաշիրզ“ յորջորջող կառավարութիւնը, եթէ բոլոր ոճիրների հանդէպ ցուցներ նման փութկոտութիւններն ու խստութիւնները, ո՞վ չգիտէ որ Թիւրքիան այս օրին չպիտի հասնէր... բայց թէ ի՞նչ կանէք, երբ այսօրուայ տխուր անկումին մէջ ալ, նա նախկին խտրական ոգիով է որ կը շարունակէ իր ընթացքը։

„Հայրենասէր“ կառավարութիւնը, հայուն ֆէսադ տեսնելով, խիստ պարտուքի ենթարկելով, կը խլէ անոր հին, փտած ու ժանգոտած զէնքերը. Մինչդեռ անդին, իր աչաց առջև, Ֆէհիմները, Հիւսէինները, Ֆաթէները, շէյխերի հետ ձեռք ձեռքի տուած կը զինեն իսլամներին, պատրաստութիւններ կը տեսնեն... Կառավարութիւնը միշտ անոնց հետ է, որ կը խորհի ու կը խորհրդակցի... Օր ցերեկով քրդութիւնը զինուած կը պտտի, նոյնիսկ Կոփի մէջ, որ կեդրոնավայր է...

Եւ դեռ կան միամիտ աղաւնիներ, որոնք հալած իւղի տեղ ընդունելով „Թոփրաք-գարտաշիրզ“ կեղծ նշանաբանը, կը յուսայ թէ շէրիաթական Թիւրքիան պիտի բարեկարգուի եղեր...

—

Երզնկա, մայիս 10

Լսեցիք Սարգիսենց տան պայթումը... Թէ ինչպէս եղաւ — այդ գաղտնիքը հետերնին տարին նահատակուած երիտասարդները։ Խուզարկութեան ատեն գտան քանի մը ռումբեր, մեծ մասամբ պարապ։ Խուզարկեցին ոսկերիչներու և դեօքմաճիններու տները, Սարգիսենց տնէն տարան փամփուշտներ։ Առջի օրը բանտարկեցին 20—30 մարդ։ Կամաց-կամաց արձակելով, այժմ կը գտնուին բանտը 6—7 հոգի։

Թէ ինչ թուղթեր, տօքիւմաններ գտնուած են Սարգիսենց տունը — յայտնի չէ։ Ամեն պարագայի տակ կառավարութիւնը չուզեր ըստ երևոյթին մեծցնել խնդիրը... Երեք նահատակները սքանչելի տղաք էին, մանաւանդ Սարգիսը։ Ուրիշ անձ մը, դեօքմաճի խաչիկը, ինքզինքը զարկեց ուրիշի տան մէջ, շատ մը գաղտնիքներ տանելով իր հետ...

Կ'ըսեն թէ ամեն գէշութենէ բարիք մը կը ծնի։ Նոյնպէս այս գործէն ալ. այժմ կը նշմարուին բարերար հետևանքներ։ Թիւրքերու վրայ մեծ երկիւղ ազդած է։ Ռումբերէն կը սոսկան։ Երբ միւշիր Օսման փաշան տեսնել գացեր էին մեր մեծերը և եպիսկոպոսը, միւշիրը կ'ըսէ. „եղբա՛յր, թէև ես այս գործին մէջ պիտի խառնուիմ, ամմա... ձեզմէ հեռու ըլլացողը Աստուծոյ մօտ կըլլայ, ես ձեզնէ կը վախնամ“...

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

ՍԿՍԻԱԾ Է...

—

Մեզ հեռագրում են, Սարըղամիշի վրայով, հետևեալը.

Միր Մհէն նոր յարձակում գործեց. վալին իր 400 մարդկանցով ու երկու թնդանօթով յետ նահանջեց. այն ժամանակ քրդերը ներս խուժեցին Բողազքեսան հայ գիւղը, քշեցին նախիրը։ Անհետացած 15 հոգի։

—

Ահա մի նոր հեռագիր, որ ստանում ենք վերջին պահուն ռուս-թիւրքական սահմանագլխից և որ նոյնպէս ծանուցանում է „դէպքերու“ սկզբնաւորումը.

Զունդի (?) սպանութիւնից յետոյ հազարաւոր քիւրդերը յարձակուեցին Գիւրանց (?) և կարճկան հայ գիւղերի վրայ։ Հայերը դիմադրում են։ Ղրկւած են զօրքեր։

Իսկ քիչ առաջ — Միր Մհէի արշաւանքը, Բողազքեսանի գրաւումն ու կողոպուտը, 15 մարդկանց անհետացումը...

Ի՞նչ է կատարւում այս վայրկեանիս այն հեռաւոր դժոխքի մէջ, ի՞նչ կարող է առաջ գալ վաղուան օրը... սարսափելի է մտածել։ Մի բան պարզ է. սկսւել է նախճիրների, գուցէ նաև արիւնոտ ճակատամարտների շարանը, վերսկսւել է բարբարոսների արշաւը և նոմադ, արիւնռուշտ քիւրդութիւնը, նորէն ոտից ցգլուխ զինւած, սլանում է զանգւածօրէն դէպի „ֆլան“, դէպի իր յաւիտենական ողջակէզը, գնում է բորբոքած ախորժակներով և ատամների կրճատցով, յափշտակելու այն համեստ ստացւածքը, որ ձեռք է բերել զոհը 4—5 տարւայ „սահմանադրական“ ռէժիմի տակ, գնում է նաև վրէժխնդիր լինելու, պատժելու ֆլային, որ նոյն սահմանադրութեան շնորհիւ անցել էր մարդու կարգ և ազատ ու համարձակ խօսում էր, գրում, բողոքում իր դարաւոր դահիճների դէմ։

Սկսւել է „դէպքերի“ շարանը. հեռագիրը—պարզ ու անողորմ իր լակոնիկ ոճի մէջ — ծանուցանում է այդ՝ ռազմի ու արեան վայրերից, „հայերը դիմադրում են“, և մեր սիրտը ճմլւում է, մտածելով, թէ գուցէ այսօր կամ վաղը հայ մարտնչող երիտասարդութիւնը այնտեղ, քրդական սպառազինւած վոհմակների դէմ յետ կը նահանջէ պարտւած, ուժասպառ... որովհետև չունի դիմադրութեան բաւականաչափ միջոցներ, որովհետև հայ ունևոր դասակարգը, հայկական բուրժուազիան, մի անգամ ևս խուլ մնաց անձնուէրների կոչերի հանդէպ, մի անգամ ևս բութ, ապիկար հանդիսացաւ ըմբռնելու վայրկեանի պահանջը, հասկանալու կացութեան վտանգները և դարձեալ փարեց միակ ու միակ „փրկութեան խարիսխ“—դիւանագիտութեան...

Ա՜հ, թո՛ղ այն արիւնը, որ այսօր գուցէ առատօրէն աղբրում է հայ մարտիկների երակներից — փրկելու համար ժողովրդային զանգւածները մի նոր ցիկլօնի արհաւիրքներից—թո՛ղ նա ժայթքէ հայ ազգաւ ու անգիտակից բուրժուազիայի և նրա ապիկար իդէօլոգների խղճի վրայ...

—

Կ. Պոլսից հեռագրում են *Temps*-ին.

Ֆրանսիան առաջարկել է պետութիւններին՝ անմիջապէս ձեռնարկելու ռէֆօրմների գործին՝ Հայաստանի մէջ, նշանակելով կայսերական մի բարձրագոյն կառավարիչ Արևելեան Անատոլուի վեց վիլայէթների վրայ։ Այդ առաջարկը ներկայումս քննւում է պետութիւնների կողմից։

—

Echo de Paris հետևեալն է գրում այդ առթիւ.

Ռուս կառավարութիւնը, որի հողերի վրայ տխրօրէն անդրադառնում են Թիւրքահայաստանում տեղի ունեցող անկարգութիւնները, որոշ ժամանակից ի վեր ուղղել է պետութիւնների ուշադրութիւնը հայկական վեց վիլայէթների վրայ, հասկացնելով, որ անհրաժեշտ է վերակազմել այնտեղ վարչութիւնը։ Այդ վերակազմութիւնը ազգու և արդիւնաւոր դարձնելու համար, անհրաժեշտ է, բնականաբար, որ յիշեալ վեց վիլայէթներին տրւի որոշ ինքնօրինութիւն (*autonomie*) և որ այնտեղ հաստատւի եւրոպական հսկողութիւն։ Ռուսաստանը, շեշտելով հանդերձ, որ ունի այդ վայրերում աւելի կարևոր շահեր, քան որևէ այլ պետութիւն, չի պահանջում իրեն համար որևէ տարամերժ առաւելութիւն և չունի ոչ մի յետին միտք։ Ռուս կառավարութիւնը չի ձևակերպել տակաւին վերջնական ծրագիր, բայց կարծիքների փոխանակութիւնը տեղի ունի ներկայումս եւրոպական դաշնիձների միջև, ի մասին այն առաջարկի, որ նրարք ստացել են Պետերբուրգից։

Կարծիքների այդ փոխանակութիւնը կարող է տևել երկար։ Առ այժմ—քանի որ նոր պատահաներ կարող են առաջ գալ Թիւրքաց Հայաստանում— Ֆրանսիան առաջարկել է՝ հրաւիրել Բ. Դուռը նշանակելու վեց վիլայէթների վրայ մի ընդհանուր վերակացու, որ կարող է լինել օսմանցի։ Այդ բարձր կոմիսարը կ'անձնաւորէ կառավարութիւնը։ Նրա միսսիօնը ժամանակաւոր կը լինի, քանի որ մօտ ապագայում պիտի մշակւի անպատճառ ռէֆօրմների ծրագիր։

Ֆրանսիայի առաջարկը ամենալաւ ընդունելութիւն է գտել և այժմ սպասում են միայն երկու պետութեանց համաձայնութիւնն ստանալու։

ԱԶԳ

Խնդրում ենք Ամերիկայի մեր բաժանորդներից—որ արձանագրւել են 1912-ի № № 6, 7, 8-ից—վերանորոգեն իրենց բաժանորդագրութիւնը՝ հասցէներն ուղարկելով, որպէս զի հարկադրւած չլինենք թերթի առաքումը դադարեցնելու։